

# Հողվածներ

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՅՐ,  
«ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ՄԱՏԵՆԱԾԱՐԸ ԵՒ ՆՈՐԱՅՐ  
ԲԻԷՉԱՆԳԱՑԻՆ

Բանալի բառեր՝ Մարտիրոս Մինասեան, գրաբար բնագրերի քննութիւն, գիտական ժառանգութեան հրապարակման հարցեր:

Լեզուաբան, բառարանագիր եւ ընդհանրապէս դասական իմաստով բանասէր Ստեփանոս Մալխասեանցը (25 հոկտ./7 նոյ. 1857 թ., Ախալցխա – 21 յուլիսի 1947 թ., Երեւան) ժԹ-ի. դարերի մեր գիտութեան երեւելի եւ արդիւնաշատ գործիչներից է: Նա առաւել յայտնի է իր քառահատոր «Հայերէն բացատրական բառարան»ով, որը հեղինակի կեանքի օրօք (Երեւան, 1944-1945 թթ.) տպուելուց եւ Խորհրդային Միութեան պետական մրցանակի արժանանալուց (1946 թ.) յետոյ, հակառակ իր մեծ ծաւալի (2404 մեծագիր եռասիւն էջ), երեք անգամ վերահրատարակուել է (Բէյրութ, 1955-1956 թթ., Թեհրան, 1982 թ. եւ Երեւան, 2010 թ.), որ ինքնին մեր իրականութեան համար եզակի երեւոյթ է: Բնականաբար, սա պայմանաւորուած է բառարանի մեծ արժէքով եւ դեռեւս գերազանցուած չլինելու հանգամանքով. առաջին հրատարակութիւնից երեք քառորդ դար է անցել, սակայն Մալխասեանցի բառարանին համարժէք՝ նրա տեղը բռնող կամ նրանից արելի լաւ նորը չունենք:

Այսուհանդերձ, բառարանը Մալխասեանցի գիտական հսկայ վաստակի սոսկ մէկ միաւորն է. Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի հիմնադիր անդամ լինելու շնորհիւ այսօր ունենք նրա ո՛չ ամբողջական<sup>1</sup> կենսամատենագիտութիւնը<sup>2</sup>, որի մէջ թուարկուած են Մալխասեանցի գիտական, երբեմն էլ՝ հրապարակախօսական բնոյթի 278 տպագիր գործ եւ նրան վերաբերող 76 հրապարակում: Հասկանալի է, որ այս 278 թուի մեծ մասը սակաւամատչելի հին ամսագրերում եւ դժուար օգտագործելի օրաթերթերում ցրուած յօդուածներ են: Այս ամէնի պատշաճ գործածութիւնն ապահովելու, գիտական հարցերի դէպքում նաեւ հնարաւոր նոր «գիւտեր»ը կանխելու լաւագոյն միջոցը մեր այս երախտաւոր մտաւորականի երկերի հատորաշար հրատարակելն է<sup>3</sup>, ինչպէս վերջերս արուեց Յակոբ Մանանդեանի (8 հատոր) եւ Նիկողայոս Ադոնցի (7 հատոր) երկերի հետ, ինչպէս աւելի առաջ տպագրուել է Մանուկ Աբեղեանի գործերի ութհատորեակը, նոյնպէս եւ Հրաչեայ Աճառեանի՝ Հայերէնի համեմատական բազմահատոր քերականութիւնը<sup>4</sup>. եւ այլն:

Քերեք Մալխասեանցի վաստակի հատորաշարային հրատարակման անհրաժեշտութիւնը հաստատող սոսկ մի փաստարկ. մեր գիտական բնագրագիտութիւնն սկսուել է փաստորէն Ի. դարի սկզբին՝ Ստեփանոս Մալխասեանցի նախաձեռնած «Պատմագիրք Հայոց» մատենաշարով, որի մէջ կիրառուած հնարքներով ու եղանակներով նոյն դարի ընթացքում եւ մինչեւ օրս հրատարակուած են միջնադարեան հայկական տարատեսակ սկզբնաղբիւրները: Սրանով իսկ մեր գիտութեան պատմութեան համար շատ կարեւոր են թէ՛ այս մատենաշարը եւ թէ՛ նրա սկզբնաւորմանը վերաբերող մանրամասները:

Վերջերս առիթ ենք ունեցել անդրադառնալու նոյն մատենաշարին վե-

<sup>1</sup> Մատենագիտութիւնների մեծ մասը տպագրուելու պահից իսկ հնանում են, որովհետեւ, բնականաբար, այդուհետ հրապարակուած նիւթերը ներառնել չեն կարող:

<sup>2</sup> Տե՛ս <http://bit.ly/2nHz9L7> (12 փետ. 2018 թ.):

<sup>3</sup> Զափագանց ֆիլ եւ մեր պատկերացրածի համար խիստ անբաւարար են հետեւեալները. 1. **Ստ. Մալխասեանց**, *Բանասիրական հետազոտութիւններ*, կազմեց եւ ծանօթագրեց Ա. Գ. Մադոբեան, Երեւան, ԵՊՀ հրատ., 1982, 320 էջ: 2. **Ստեփանոս Մալխասեանց**, *Մատենագիտական դիտողութիւններ*, ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 256 էջ (հետաւրբիւր է, որ այս գրքի ռուսերէն տիտղոսաբերում խորագիրը տարբեր է՝ «Филологические замечания». սա՛ Մ. Աբեղեանի «Հայ հին գրականութեան պատմութիւն» գործի լրացում եւ որոշ տեսակետների ճշգրտում է):

<sup>4</sup> Այսուհանդերձ, այս հեղինակի մանր գործերը, փոքրածաւալ գրքերը եւ առանձնապէս մասնուում ցրուած յօդուածները նոյնպէս արժանի են մէկտեղուելու եւ հատորաշարով հրատարակուելու:

րաբերող՝ Մալխասեանցի ծրագրային յօդուածին, այդ առիթով գրաբարագէտ-բնագրագէտ Նորայր Ն. Բիւզանդացու հետ նրա ունեցած գրագրութեանը, վերջինիս հետագայ վարմունքին<sup>5</sup>, ապա եւ՝ Մանուկ Աբեղեանի արձագանգին<sup>6</sup>: Իսկ ներկայ հրատարակման հիմնական նպատակը համարում ենք «Մշակ» օրաթերթում հատուածաբար (3 կտորով) տպագրուած այդ յօդուածի միակտուր վերահրատարակութիւնը, կցելով Մալխասեանցի՝ նոյն խնդրին վերաբերող մի այլ յօդուած, որի ծաւալի հիմնական մասը երկու նամակ է՝ մէկը Նորայրի, միւրը՝ Մալխասեանցի, նաեւ խնդրին վերաբերող Մալխասեանցի եւս երեք նամակ<sup>7</sup>, անհրաժեշտ մեկնաբանութիւններով: Սրանով, վստահ ենք, ապահովում ենք մեր բնագրագիրութեան համար շատ կարեւոր այդ նւթերի առաւել դիւրին եւ մատչելի գործածականութիւնը:

Սակայն, այդ անելուց առաջ հարկ ենք համարում համառօտ ներկայացնել նաեւ Նորայր Ն. Բիւզանդացուն, առաջնորդուելով հիմնականում լեզուաբան Մարտիրոս Մինասեանի (1926-2016 թթ.) արժէքաւոր մի հրատարակումով<sup>8</sup>: Իսկական անունը՝ Ստեփանոս Գազէզեան-Ճիզմէճեան-Թերզեան. ծնունդ է 1845 թ. մարտի 16ին, Կ. Պոլսում, 1854 թ. աշնանը մեկնել է Վենետիկ՝ Ս. Ղազար, 1866 թ. ապրիլի ծին Հ. Յարութիւն Թերզոնց անունով անդամակցել է Մխիթարեան միաբանութեանը, որից անջատուել է 1873 թ. յուլիսի 30ին, 1876 թ. աշնանից ի վեր իր նամակները ստորագրել է նոր՝ «Նորայր Ն. Բիւզանդացի», ֆրանսերէն՝ «Néandre de Byzance Noray» անունով, 1881 թ. յունիսի

<sup>5</sup> Տե՛ս **Նորայր Ն. Բիւզանդացի**, «Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղազարայ Փարպեցոյ», Յուշարձան. Գրական ժողովածոյ առթիւ 100 ամեայ յոբելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911) եւ 25 ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթի (1887-1911), հրատարակեալ ի Մխիթարեան միաբանութեանէ..., Վիեննա, Մխիթարեան տպ., 1911, էջ 161-174:

<sup>6</sup> Տե՛ս **Գեորգ Տէր-Վարդանեան**, ««Պատմագիրք Հայոց» մատենաշարը եւ մեր բնագրագիրութեան խնդիրները», էջմիածին, 2016, Զ., էջ 74-98:

<sup>7</sup> Այսինքն՝ Մալխասեանցի երկու յօդուածի հետ միասին այստեղ հրատարակում ենք ընդամենը հինգ նամակ, մէկը Նորայրի՝ ձեռագիր բնագրի եւ տպագրի համեմատութեամբ, չորսը՝ Մալխասեանցի, որոնցից մէկը եւս ձեռագիր բնագրի եւ տպագրի համեմատութեամբ: Մալխասեանցի առաջին, երրորդ եւ չորրորդ նամակները աղաւաղ ուղղագրութեամբ եւ մեր առաջադրած խնդրից անշատ, տպուած են՝ **Աւետիք Աղամեան**, «Հայագիտութեան հարցերը Ստեփանոս Մալխասեանցի նամակներում», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 1969/1, էջ 71-77 (ամբողջ հրատարակումը՝ էջ 61-80):

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս **Մարտիրոս Մինասեան**, «Նորայր Ն. Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնների եւ դիւանի ցանկը», *Բագմալէպ*, 1983/Ա-Գ., էջ 39-97 (այսուհետեւ՝ **Մինասեան**, Նորայր):

18ին Պոլսում ամուսնացել է Շուեդիայի արքունի լուսանկարիչ Սելմա Եակոբսոնի հետ, ժամանակ անց նրա հետ տեղափոխուել է Ստոկհոլմ, կնոջ մահից (1899 թ. մարտի 30) ժամանակ անց՝ 1903 թ. վերջին հաստատուել է Վենետիկում, ուր եւ մահացել է 1915 թ. դեկտեմբերի 25ին: Ըստ իր կտակի՝ 1924ի դեկտեմբերին նրա աճիւնը տեղափոխուել է Ստոկհոլմ եւ դրուել իր իսկ կառուցած դամբարանում՝ կնոջ շիրմի մօտ:

Նորայրը յայտնի էր առաւելապէս իր կեանքի օրօք տպուած երեք արժէքաւոր գրքով. «Հայկական բառաքննութիւն» (Պոլիս, 1880), «Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայ» (Պոլիս, 1884), «Կորին վարդապետ եւ թարգմանութիւնք նորին» (Տիփլիս, 1900): Իրենից յետոյ տպագրուել է եւս մի գիրք՝ «Քննադատութիւն Հայ բուսակի» (Վիեննա, 1925). բնականաբար, ունի նաեւ իր ժամանակի գիտական եւ առօրեայ մամուլում տպագրուած յօդուածներ:

Այնուհետեւ տարբեր հեղինակների գանազան հրապարակումներով յայտնի դարձաւ, որ Նորայրն իր ամբողջ ունեցուածքը՝ կնոջից ժառանգութիւն մնացած 125.000 շուէդական կրօնը, գրադարանը, ձեռագիր աշխատութիւնները եւ ֆրանսերէն-հայերէն բառարանի չվաճառուած 1000 օրինակը կտակել է Ստոկհոլմում գործող՝ շուէդական կանանց «Frederika-Bremer-Förbundet» ընկերութեանը<sup>9</sup>, վերջինս էլ 1922 թ. Նորայրի արխիւը եւ գրադարանը վաճառել է Գէոտեբորգի քաղաքային գրադարանին, որտեղից եւ այդ ամէնը 1960 թ. անցել է նոյն քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանին<sup>10</sup>, ուր եւ պահպանուում է մինչեւ օրս: Նորայրի արխիւը տեսնելու առիթ են ունեցել. առաջինը՝ 1946-7ին Սուրէն Երզնկեանը (Ս. Լօրելիի), 1963ին՝ Հայկ Պէրպէրեանը, 1982ին՝ Մ. Մինասեանը: Առաջինը նամակներով եւ թուուցիկ հրապարակումներով մեր հասարակութեանը տեղեկացրեց մոռացուած արխիւի մասին, երկրորդը Գէոտեբորգ էր գնացել Նորայրի որոշ գործերի ժապաւինային պատճէններ<sup>11</sup> պատրաստելու առաքելութեամբ:

Իսկ Մարտիրոս Մինասեանը 1982 թ. դեկտեմբերի 6-9 շորս օրուայ ընթացքում իր կնոջ օգնութեամբ կարգաւորել եւ թուուցիկ նկարագրել է Նորայրի դիւանը<sup>12</sup>, որը, նրա գրադարանի հետ միասին, Վենետիկից Ստոկհոլմ, այնտեղից էլ՝ Գէոտեբորգ տեղափոխուելու ճանապարհներին բաւական տուժել է՝

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 48:

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 55:

<sup>11</sup> Այժմ պահպանում են Մաշտոցեան Մատենադարանում եւ Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի գրադարանում:

<sup>12</sup> Տե՛ս Մինասեան, Նորայր:

զգալապէս այն պատճառով, որ տեղափոխողներն ու նիւթերը պահպանողները հայերէն տառ անգամ չեն ճանաչել: Ըստ Մարտիրոս Մինասեանի՝ «Կան թղթեր, էջակալուած կամ ոչ, տետրեր, որոնք խոստումնալից վերնագրեր ունեն, բայց միայն մի քանի գրուած էջեր են պարունակում. նշումներ եւ ուրուագծեր աւելի շատ են, քան աւարտուած աշխատանքներ... Նորայրը շատ բանի է ձեռնարկել, բայց քիչ բան է աւարտել, այն էլ միշտ վերանայել է ու լրացրել: Երկար ամիսներ է անհրաժեշտ բոլոր թղթերն ուսումնասիրելու եւ վերագասաւորելու, նոյն նիւթին վերաբերողները ի մի բերելու եւ միանգամայն աւելորդ դարձածները որոշելու համար»<sup>13</sup>:

Այսուհանդերձ, Մինասեանի համար Նորայրի արխիւը տեսնելը եւ նրա ցանկը կազմելը բառի լաւագոյն իմաստով ճակատագրական եղաւ թէ՛ իր եւ թէ՛ յատկապէս Նորայր Բիւզանդացու անտիպ մնացած վաստակի համար. Գէոտեբորգի համալսարանի գրադարանի հետ հետագայ բանակցութիւններով պատճէններ ստացաւ եւ գիտական մամուլում հրատարակեց Նորայրի շատ թէ քիչ աւարտուն մանր գործեր, եւ աւելին՝ փոքր (50 կամ 25 օրինակ) տպաքանակներով, մեծադիր՝ 30x21 սմ չափսով հրատարակեց նրա որոշ կարեւոր աշխատութիւնների պահպանուած մասերը. այդպիսիք են՝ «Նախնիք» (Ժնեւ, 1996, 575 էջ), «Բառգիրք ստորին հայերէնի» (Ժնեւ, 2000, 767 էջ), «Ուսումնասիրութիւններ, բնագրեր, բառարանագրութիւն» (Ժնեւ, 2003, 543 էջ) եւ այլն: Շատ կարեւոր է նաեւ Մինասեանի հետեւեալ հրատարակումը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա.-Բ., Վենետիկ, 1836-1837. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով» (Ժնեւ, 1990, հտ. Ա.-Ե.): Նոր հայկազեանի 2227 մեծադիր (գրադաշտը 25,2x17 սմ) էջ<sup>14</sup> ունեցող երկհատորեակի բոլոր թերթերի միջեւ մէկական թերթ մուծելով, Նորայրն արել է իր սրբագրումները եւ յաւելումները, որոնք մեր լեզուի գրաբար շրջանի՝ մինչեւ ԺԱ. դարի, նաեւ միջին շրջանի (մինչեւ ԺԷ. դ.) բառագանձի հետազօտման համար չափազանց մեծ արժէք ունեն:

Մինասեանի նորայրեան բոլոր հրատարակութիւնների թուարկումը մեր ներկայ խնդրից դուրս է, ուստի յիշելով, որ նա իր տպագրութիւնների վերջում սովորաբար զետեղել է սեփական գործերի եւ Նորայրի երկերի իր հրատարա-

<sup>13</sup> **Մինասեան**, *Նորայր*, էջ 59. Ընդգծումը մերն է - Գ. Տ-Վ.:

<sup>14</sup> Հտ. Ա. Ա.-Կ, Վենետիկ, 1836. 20, 1140 էջ, հտ. Բ. Հ-Ֆ, Վենետիկ, Ա. Ղազար, 1837. 1067 էջ:

կուսիներին ցանկերը, բաւարարուենք յիշատակելով այդպիսի երկուսը<sup>15</sup>: Ապա նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նորայրն իր ամբողջ կեանքում եւ գրեթէ բոլոր տեսակի գործերի մէջ զբաղուել է մեր աղբիւրների բնագրական խնդիրներով, որպէս Մինասեանի աշխատանքների կարեւորագոյն մի արդիւնք արձանագրենք, որ նրա շնորհիւ, թէկուզ հնարաւոր նուազագոյն տպաքանակներով, գիտական շրջանառութեան մէջ մտան Նորայրի բնագրագիտական եւ բառարանագրական կարեւորագոյն աշխատութիւնների պահպանուած մասերը: Իսկ սա նշանակում է, որ դրանք կարող են, աւելին՝ պէտք է անպայման գործածուեն մեր միջնադարեան բնագրերի բոլոր արծարծումների, առաւել եւս՝ նոր հրատարակութիւնների մէջ<sup>16</sup>:

Կայ նաեւ աւելին. Նորայրը աշխոյժ նամակագրութիւն է ունեցել իր ժամանակի տասնեակ մտաւորականների հետ. պահպանուած՝ հրատարակուած կամ դեռեւս հրատարակելի նամակները մօտ երկու հազար<sup>17</sup> են. ահա նրա՝ Մատենադարանեան արխիւում<sup>18</sup> առկայ նամակագրութեան գնահատականը. «Ն. Բիւզանդացին թողել է աւելի քան 1977 նամակներ՝ ուղղված հայ, ռուս, անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, իտալացի, շուեդացի եւ այլ գիտնականների: Արխիւում պահուում են նաեւ Ն. Բիւզանդացուն հասցէագրած՝ Ա. Բագրատունու, Ա. Ղազիկեանի, Ն. Ակինեանի, Մ. Օրմանեանի, Ն. Մառի, Ա. Չոպանեա-

<sup>15</sup> Տե՛ս, օրինակ՝ **Մարտիրոս Մինասեան**, *Աստուածանշի արեւելահայերէն էջմիածնական թարգմանութեան որակը*, Ժնև, 2006, երկրորդ էջակալման էջ [155-7], նոյնք տես նաև՝ **Մարտիրոս Մինասեան**, *Արեւելահայերէն նոր կտակարանի էջմիածնական թարգմանութեան որակը*, Ժնև, 2006, էջ [154-6]:

<sup>16</sup> Մեր բոլոր բնագրական հրատարակութիւնների մէջ այդպէս էլ վարուել ենք. օրինակ՝ Լ. դարի պատմագիր Ղետնդի երկի մեր հրատարակութեան մէջ Նորայրի «Նախնիք» գործի վերաբերեալ գրել ենք. «այստեղից արձանագրել ենք 50 առաջարկ՝ մեծ մասը ձեռագրական ընթերցումներով հաստատող, հիմնաւոր եւ ընդունելի» (տես ս ՄՀ, Զ. հտ., Լ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 732): Հպանցիկ նկատենք, որ, ցաւօք, միշտ չէ այդպէս արւում. օրինակ Մինասեանը, Նորայրի գործը լրացնելով հրատարակել է բնագրագիտական կարեւոր արժէք ունեցող մի գիրք (**Մարտիրոս Մինասեան**, *Մովսիս Խորենացու Պատմութիւն Հայոց (Նորայր Ն. Բիւզանդացու հետ)*, Ժնև, 1991, 337 էջ), որը, սակայն, նկատի չի առնուել Խորենացու Պատմութեան վերահրատարակութեան մէջ. հմմտ. ՄՀ, Բ. հտ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, [Ժ.], էջ 1737-2121:

<sup>17</sup> Համեմատութեան համար նկատենք, որ Ն. Ադոնցի երկերի շարքի վերջերս հրատարակուած «Նամականիք» հատորում կայ ընդամենը 135 նամակ. տես **Նիկողայոս Ադոնց**, *Երկեր*, հտ. Է. *Նամականիք*, խմբ. Պ. Յ. Յովհաննիսեան, Եր., ԵՊՀ հրատ., 2014 (288 էջ, 5 ներդիր):

<sup>18</sup> Նորայրի արխիւի մի փոքր մասը Հայկ Պէրպլեւեանի ջանքերով բերուել է Հայաստան եւ 1965 թ. ի վեր պահպանուել է Երեւանում՝ Մաշտոցեան Մատենադարանում. մասնամասները տես **Աւետիք Հ. Աղամեան**, «Նորայր Բիւզանդացու արխիւր», ԼՀԳ, 1972/10, էջ 120-121:

նի, Կ. Եգեանի, Ս. Մալխասեանի, Ք. Պատկանեանի, Խրիմեան Հայրիկի, Մ. Պոտուրեանի, Ա. Արփիարեանի, Թէոդիկի, Բ. Սարգիսեանի, Վ. Շիշմանեանի, Ի. Կիրեղեանի, Օ. Կարիէրի, Է. Տէգայի, Ֆ. Միւլլէրի, Եսայի Տայեցու, Թ. Կէտիկեանի, Գ. Ճէլալեանի, Յ. Թորոսեանի, Հ. Պալեանի, Արիստակէս վարդապետ [Վարդանեան]ի, Ա. Աբէլեանի եւ այլոց նամակները: Արխիւում գրութիւններ եւ նամակներ կան հայկական թերթերի խմբագրութիւններից, միաբանութիւններից, դպրոցներից, ընկերութիւններից»<sup>19</sup>: Գրեթէ բոլոր նամակների մէջ Նորայրն արծարծել է գիտական խնդիրներ, բանասիրական եւ բնագրագիտական նրբին հարցեր, առաջարկել է մեր ամենատարբեր մատենագրական երկերի տարատեսակ տեղիների եւ ընդհանրապէս բառերի ու դարձուածների սրամիտ սրբագրումներ: Դժուարանում ենք յիշել որեւէ մտաւորականի նամականի, որի մէջ Նորայրի թղթակցութեան շափ առատօրէն արծարծուած լինեն մեր միջնադարեան գրականութեան տարատեսակ հարցեր: Ներկայումս կազմում եւ հրատարակում են նրա քննած աղբիւրների նոր բնագրեր, որոնց պատրաստողները ցրիւ տպագրուած նամակների այդպիսի նիւթը՝ սրամիտ կռահումներն ու սրբագրութիւնները նկատի ունենալու կամ արձանագրելու համար չեն կարող հսկել եւ օգտագործել տարբեր պարբերականներում ցրուած առաջարկները, որովհետեւ, նախ՝ իրաւունք ունեն չիմանալու, թէ Նորայրից որտե՞ղ եւ ի՛նչ նամակներ են հրատարակուած, ապա՝ ուղենիշներ (անուանացանկեր) չունեցող այդ հրատարակումների մէջ կարող են երկար փնտրել եւ չգտնել իրենց հարկաւոր նիւթը:

Միով բանիւ, Նորայրի նամականին իր արժէքի առումով մօտ է նրա «Նախնիք» գործին, ըստ այսմ՝ լիովին համոզուած ենք, որ այս հեղինակի այլ գործերին հաւասար կարեւորութիւն պէտք է տալ նաեւ նրա նամականուն եւ պահպանուած ամբողջը հրատարակել, ձգտելով անել աւելին. նրա թղթակիցների արխիւներում արժէ փնտրել Նորայրին գրուած նամակները եւ հրատարակել հնարաւոր շափով նամակ-պատասխան յաջորդականութեամբ կամ երկխօսութեան ձեւով. ասենք՝ Ստեփանոս Մալխասեանցի նամակները եւ Նորայրի՝ նոյն նամակներին տուած պատասխան(ներ): Ըստ որում, նամականիի հատոր(ներ)ը պէտք է օժտուած լինեն ճշգրիտ ցանկերով՝ անձնանունների (արծարծած բնագրերի հեղինակների), տեղանունների, սրբագրուած բառերի եւ դարձուածների: Լիովին հաւատացած ենք, որ Նորայրի եւ իր թղթակիցների

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 121:

նամականիի այսպիսի հրատարակութիւնը կարելոր է լինելու ո՛չ միայն գիտութեան պատմութեան համար, այլեւ՝ մեծապէս նպաստելու է նոյն գիտութեան առաջընթացին: Ի վերջոյ, շեշտենք, որ Նորայրի նամակների լաւագոյնս ծանօթագրուած մի հրատարակութեան համար կրկին պարտական ենք նոյն Մարտիրոս Մինասեանին<sup>20</sup>, ուստի եւ նամականիի մեր պատկերացրած ապագայ հրատարակութիւնը ցանկալի է անել առնուազն նրա տպագրածի մակարդակով:

Ուստի յիշելով, որ դեռեւս 2005 թ. շարուածքային եղանակով վերահրատարակել ենք 1887ին Ստոկհոլմում խմորատիպ ձեւով Նորայրի տպած «Քննասէր» ձեռագիր պարբերականի երկու պրակը (միատեղ)<sup>21</sup>, որի մէջ եւս բաւական շատ են բնագրերի սրբագրութիւնները, նաեւ՝ որ Մ. Մինասեանը կազմել է «Նորայր Ն. Բիւզանդացու կեանքին ու գործին վերաբերող գրականութեան ցանկ»<sup>22</sup>, վերջինիս որեւէ միաւոր չկրկնելով<sup>23</sup>, Նորայրի նամականու մեր պատկերացրած ապագայ ցանկալի հրատարակութեանը նպաստելու համար՝ հրատարակողների ազգանունների այբբենական կարգով այստեղ տալիս ենք նրա նամակների մեզ յայտնի հրատարակութիւնների մի այլ ցանկ.

Աղամեան Աւետիք Հ., «Նորայր Բիւզանդացու արխիւր», ԼՀԳ, 1972/10, էջ 120-121 (ներկայացնում է Նորայրի արխիւի՝ Մաշտոցեան Մատենադարանում գտնուող մասը):

Աղամեան Աւետիք Հ., «Նորայր Բիւզանդացու նամակները Կարապետ Եզեանին», ԼՀԳ, 1974/8, էջ 85-101:

Բախչինեան Արծուի Հ., «Նիւթեր Նորայր Բիւզանդացու արխիւի վերաբերեալ», ԲԵՀ, 2003/2 (110), էջ 104-109 (նամակագրութիւն Նորայրի արխիւի մասին):

<sup>20</sup> Նորայր Ն. Բիւզանդացի, *Նամակներ Վիեննայի Միսիթարեանների[ն]*, հրատ. Մինասեան Մարտիրոս, Ժնև, Ղուկասեանց եղբայրների հաստատութեան հրատ., 1992, 62 էջ: Այս գրքում տպուած է 40 նամակ, կայ նաեւ «Բառացանկ» (էջ 57-62). նոյնի մի այլ տարբերակն է հետեւեալը՝ «Նորայր Ն. Բիւզանդացի, *Նամակներ Վիեննայի Միսիթարեանների*, պատրաստեց Մարտիրոս Մինասեան, Պէրուք, 1992, 109 էջ», որի մէջ նամակների քանակը 41 է եւ որը Մինասեանն իր հրատարակութիւնների ցանկում զարմանալիօրէն չի նշում:

<sup>21</sup> Տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան**, «Նորայր Բիւզանդացու «Քննասէր»-ը», *ՊԲՀ*, 2005/Բ., էջ 101-143:

<sup>22</sup> Տե՛ս **Մինասեան**, Նորայր, էջ 40, ծ. 1. այդ փոքր ցանկում կան նաեւ նամակների հրապարակումների խորագրեր:

<sup>23</sup> Նորայրի գիտական վաստակին է վերաբերում Մինասեանին անձանօք մնացած հետեւեալը՝ **Նորանդ Շահագիզ**, «Նորայր Բիւզանդացին եւ նրա գրական ժառանգութիւնը», *էջմիածին*, 1950/է. (3-4), էջ 26-31:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բյուզանդացու անտիպ նամակները», *Էջմիածին*, 1998/2., էջ 123-132:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակները ուղղուած Կարապետ Եզեանին՝ գրուած 1890-1893 թթ.», *Էջմիածին*, 2009/Ա, էջ 69-88:

Ղազարեան Գոհար, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակները (1896-1897 թթ.)», *ՔՄ*, 25, 2018, էջ 398-424:

Ղազարեան Ռուբէն Ա., «Լեզուաբանական ուսումնասիրութիւններ», Երեւան, ԵՊՀ հրատ., 2010, էջ 323-357:

Ղազարեան Ռուբէն Ա., «Նորայր Բիւզանդացու նամակներից՝ ուղղուած Գիտ Բահանայ Աղանեանին», *ԲԵՀ*, 1992/1 (76), էջ 148-157:

Ղազարեան Ռուբէն Ա., Տէր-Ստեփանեան Ա. Գ., «Նորայր Բիւզանդացու նամակագրութիւնից», *ԲԵՀ*, 1972/1, էջ 172-177:

Վարդանեան Ա. Վ., «Անտուան Կարիէրի եւ Նորայր Բիւզանդացու նամակագրութիւնից», *ՊԲՀ*, 1977/2, էջ 232-250:

Վարդանեան Ա. Վ., Վարդանեան Վ. Գ., «Նորայր Բիւզանդացու նամակներից էմիլիո Տեզային», *ԲԵՀ*, 1993/2 (80), էջ 123-133:

Վարդանեան Արծուի, Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու անտիպ նամակներից», *ԼՀԳ*, 1979/5, էջ 92-104:

Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու նամականուց», *ԼՀԳ*, 1980/3, էջ 92-108:

Վարդանեան Վարազդատ, «Նորայր Բիւզանդացու նամակները Սուրբաս Պարոնեանին», *ԼՀԳ*, 1976/11, էջ 84-103<sup>24</sup>:

\* \* \*

*Այժմ, ըստ մեր խոստման, ներկայացնում ենք Ստ. Մալխասեանցի*

<sup>24</sup> Պէտք է նաեւ նկատի ունենայ, որ Նորայրի նամակների հայաստանեան առկայ հրատարակութիւնների մէջ բազմաթիւ սխալներ կան՝ արժարժուած նիւթին անտեղեակ լինելու, վատ կտրուելու, նաեւ՝ գրեթէ գրաբար շարադրանքի ուղղագրութիւնը փոխելու «սովետական» դարձնելու պատճառով: Տե՛ս, օրինակ՝ Վարազդատ Վարդանեան, «Նորայր Բիւզանդացու նամակները Սուրբաս Պարոնեանին», *ԼՀԳ*, 1976/11, էջ 84-103 (յատկապէս՝ էջ 92. «հատուցի»-ի փոխարէն գրուած է «հատուցի»), «Ժամանակ եւ ինչ թող մնայ առ իս մատեանդ»-ի փոխարէն՝ «Ժամանակ եւ ինչ թող մնայ առ իս մատեանդ» (անճշտութիւն սխալներ կան նաեւ սրա յաջորդ՝ 93րդ էջում. եւ այլն): Ուստի սրանք վերահրատարակելիս պէտք է հիմնուել միայն նամակների բուն բնագրերի վրայ:

«Պատմագիրք Հայոց» մատենաշարի ազդարարութիւն-ծրագրային յօդուածը՝ «Հին դարերից», որին կցում ենք հեղինակի՝ նոյն խնդրին վերաբերող մի այլ յօդուած՝ «Մոռացուած թէ ոչ», եւ սրանով դիւրացնում ենք հին եւ դժուարամատչելի «Մշակ» օրաթերթում տպագրուած այդ յօդուածների (առաջինը հատուածաբար՝ Յ կտորով) գիտական շրջանառութիւն-գործածութիւնը:

– Առաջին յօդուածի մասերը «Մշակ»ում համարակալուած են I, II, III ձեւով, փոխել եւ դարձրել ենք՝ Ա., Բ., Գ.: Տեղ խնայելու նպատակով լրագիրը յօդուածները սեղմ եւ հոծ է տպել. պարբերութիւնների տրոհումը երբեմն փոխել ենք ըստ շարադրանքի իմաստի: Արել ենք նաեւ կէտադրական եւ ուղղագրական որոշ սրբագրումներ՝ «վրա, զարկվի... դատապարտվի», դարձրել ենք՝ «վրայ, զարկուի, դատապարտուի». եւ այլն: Որպէս տրոհիչ նշան գործածուած է նաեւ գծիկ՝ -, որ մեր ներկայ կէտադրական համակարգին խորթ է, սա փոխարինել ենք հիմնականում բուլթով, երբեմն՝ յաջորդող շարադրանքը սկսել ենք նոր պարբերութեամբ:

Տողատակի բոլոր ծանօթագրութիւնները մերն են:

\* \* \*

## 25 ԱՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

### ՀԻՆ ԴԱՐԵՐԻՑ

#### Ա.

Մենք հայերս կանգնած ենք մի մեծ, հազուադէպ յոբելեանի շեմքին: 1904 թուին լրանում է 1,500 տարի այն օրից, երբ հայոց մեծ ուսուցանող ս. Մեսրոպ-Մաշթոց վարդապետը հնարեց մեր այբուբենը. ուրեմն շուտով կը հասնէ հայոց գրերի գիւտի տասնեւհինգդարեան յոբելեանը:

Ամէն մի ազգի համար նրա այբուբենի գիւտը նշանակում է նրա լուսաւորութեան, քաղաքակրթութեան սկիզբը, նրա գրականութեան նախադուռը. ուրեմն եւ ամէն ազգի համար նուիրական պէտք է լինի իր գրերի գիւտի դարադարձը. բայց մեր մէջ նա ունեցել է նաեւ առանձին նշանակութիւն, շնորհիւ այն բացառիկ դրութեան, որի մէջ գտնուում էր մեր ազգը հինգերորդ դարի սկզբին:

<sup>25</sup> «Ֆանասիրական» վերնախորագրի ներքոյ տպագրուած է՝ «Մշակ», 1902, 27 հոկտ., Հ<sup>մ</sup> 238, էջ 1-2. 31 հոկտ., Հ<sup>մ</sup> 241, էջ 1-2. 1 նոյ., Հ<sup>մ</sup> 242, էջ 1-2. ամէն կտորի վերջում ստորագրութիւն՝ «Ստ. Մալխասեանց», որ այստեղ անուան լրացուած ձեւով դրել ենք յօդուածի սկզբում:

Երկու հզոր հարեւանների, յոյների եւ պարսիկների մէջ խեղդուած՝ փոքրիկ եւ թոյլ Հայաստանը քաղաքականապէս եւ կուլտուրապէս մօտ էր իր օրհասին: Արշակունի թագաւորները, ներքին քաղաքականութեան մէջ թոյլ, արտաքինի մէջ անհեռատես, խաղալիք էին մի կողմից ներքին հակառակ հոսանքների եւ միւս կողմից հզոր հարեւանների քմահաճոյքին: Ուժեղացած քրիստոնեայ հոգեւորականութիւնը ձգտում էր իր գերիշխանութեան ենթարկել թագաւորին եւ նրան դէպի Յունաստան ձգել. նախարարական տոհմերը, ամէն մէկը ինքնուրոյն եւ ուժեղ՝ ամէն մէկն հետեւում էր իր տեղական եւ անձնական շահերին. ընդհանուր ազգային շահեր, ազգային գիտակցութիւն պակասում էր նրանց մէջ. նրանց կախումը թագաւորից լոկ ձեւական էր. նրանք կօզնէին թագաւորին լոկ այն ժամանակ, երբ սրա նպատակները համապատասխան լինէին իրանց շահերին ու հակումներին. հակառակ դէպքում՝ հայ նախարարը զինուում էր եւ թշնամու շարքերի մէջ կուում էր բնիկ թագաւորի դէմ: Հեղինակութիւնից եւ ոյժից զուրկ այսպիսի թագաւորները հասկանալի է, թէ ինչ նշանակութիւն պէտք է ունենային այնպիսի հզոր դրացի պետութիւնների աչքում, ինչպիսին էին Բիւզանդական կայսրութիւնը արեւմուտքում եւ Սասանեան պետութիւնը արեւելքում: Արշակունի թագաւորները այս պետութիւնների հպատակներն էին (վասսալ). թագաւորում էին՝ նրանց հաւանութեամբ, զրկուած էին թագից՝ նրանց հրամանով, եւ քանի անգամ որ այս հզոր պետութիւնները իրար հետ կռիւ էին ունենում՝ տուժողը վերջ ի վերջոյ լինում էր Հայաստանը: Սրա սահմանամերձ նահանգները արեւելքից եւ արեւմուտքից հետզհետէ կրժուում, մաշուում էին, եւ սահմանները հետզհետէ նեղանում. եւ այս նեղ սահմաններում էլ Արշակունի թագաւորները միշտ ենթարկուած էին իրանց գերիշխան պետերի քմահաճոյքին: Բաւական էր մի անգգոյշ վարմունք, մի քսութիւն՝ եւ ահա այդ թագաւորները, պետերի մի հրամանով, ենթարկուում էին ամենախիստ եւ նախատական պատիժների: Յիշենք իբրեւ օրինակ, որ մի պարսիկ իշխան մտնում է Հայաստան եւ Հայոց թագաւորին սեփական բանակի մէջ բռնում է, աչքերը դաղելով կուրացնում եւ հետը Պարսկաստան գերի տանում, եւ մնում է անպատիժ: Որ Պարսից թագաւորը մի ուրիշ Արշակունի թագաւորի հրամայում է գնալ Պարսկաստան, եւ սա հարկադրուած է լինում գնալ, որպէսզի այնտեղ իբրեւ մի զգուելի ոճրագործ շղթայի զարկուի եւ ցմահ բանտարկութեան դատապարտուի մութ բանտի մէջ, ուր եւ անձնասպանութիւն է գործում: Որ մի ուրիշ թագաւորի յոյն զօրապետը Հայաստանի ծոցում իր մօտ ճա-

շի է հրաւիրում եւ քստմենելի դաւաճանութեամբ իր սեղանի վրայ նրան սպանել է տալիս. եւ անպատիժ մնում:

Ահա համառօտ, բայց ճշգրիտ պատկեր Արշակունի հայ թագաւորների գորութեան եւ քաղաքական դրութեան:

Կար մի ուրիշ գործօն, որ ազգերի պատմութեան մէջ նշանաւոր դեր է կատարել. դա քրիստոնէութիւնն էր, որ հինգերորդ դարի սկզբին Հայաստանում բռնորել էր արդէն իր գոյութեան հարիւրամեակը: Բայց ի՞նչ դրական արդիւնք ունեցաւ այս նոր կրօնը իր հարիւր տարուայ գոյութեան ընթացքում:

Ոչնչացնելով նախկին հեթանոսական զուարթ ու գեղածիծաղ պաշտամունքը, ազգային կամ ազգայնացած աստուածութիւնները, նրանց պաշտամունքին նուիրուած հայ-ժողովրդական տօներով ու հանդէսներով նոր կրօնը տուեց մռայլ, երկրային հրապոյրներն ու բարիքներն արհամարհող, երկար ծոմերի ու պահեցողութեան, չը հասկացուած աղօթքների, օտար ու օտարահնչիւն աստուածապաշտութեան մի պաշտամունք: Եկեղեցիներում ժամերգութիւնը կատարուում էր, Աւետարանը կարդացւում էր յունարէն կամ ասորերէն լեզուներով, եւ հայ ժողովուրդը, որ ամենեւին չէր հասկանում այդ լեզուները, նոր կրօնի պաշտամունքը տեսնելով, ժամակարգութիւնը լսելով՝ ուրիշ ոչ մի զգացում չէր կարող դուրս բերել եկեղեցուց, բացի այս մտքից, թէ ինչո՞ւ է Քրիստոս բարձր իր նախկին հզօր, աստուածների հայր, հայ աշխարհի պահապան Արամազդից, ի՞նչ առաւելութիւն ունի իր առաջ դրուած խաչը՝ իր նախկին Անահիտ տիկնոջ ոսկեղէն սիրուն արձանից, որին տարեկան հանդէսների ժամանակ այնպիսի հրճուանքով զարդարում էին վարդի պսակներով եւ զոհեր էին մատուցանում. ինչո՞ւ լաւ է այդ օտարաձայն քրթմնջոցը, որ այնքան ձանձրալի կերպով ղօղանջում է իրանց ականջներում, քան այն գեղեցիկ հայերէն երգերը, որոնցով գովում էին քաջ Վահագնին, ոսկեծղի Անահիտին եւ նրանց շնորհքները հայցում:

Նոր կրօնը, չը կրթելով ժողովրդի հոգին, օտար մնալով նրա սրտին՝ այնու ամենայնիւ ստեղծեց մի նոր՝ հոգեւորական դասակարգ, որ բարեպաշտ թագաւորների առատ նուէրներով ահագին հողային կալուածների ու հարստութիւնների տէր դարձաւ եւ մեծամեծ արտօնութիւններ ստացաւ: Այս դասակարգի գլխաւորները ձգտեցան նաեւ քաղաքական իշխանութիւն ձեռք բերելու, թագաւորներին իրանց հպատակեցնելու: Կինելով աւելի կրթուած ու բարեպաշտ՝ նրանք յիրաւի մեծ ազդեցութիւն ձեռք բերին. թագաւորների մօտ

խորհրդատուի, մենտորի դեր էին կատարում. նրանց ու նախարարների յարաբերութեան մէջ՝ միջնորդ էին դառնում. նրանց եւ օտար պետերի մէջ՝ դեսպան ու միջնորդ հանդիսանում: Թոյլ թագաւորներն ուղղակի ենթարկուած էին նրանց ազդեցութեան եւ նրանց կամքովն էին շարժում, իսկ եռանդուն թագաւորներն աշխատում էին թօթափել իրանց վրայից նրանց ազդեցութիւնը, եւ սկսում էր երբեմն խուլ պայքար, երբեմն յայտնի թշնամութիւն այս երկու իշխանութիւնների մէջ: Ամբողջ հարիւր տարուայ ընթացքում չէ եղել ոչ մի կաթողիկոս, որ ենթարկուած չլինի բռնութիւնների (սկսելով հալածանքից մինչեւ սպանութիւն) ժողովրդի, իշխանների կամ թագաւորների կողմից, բացի վերջին մի քանի աննշան եւ սակաւակեաց կաթողիկոսները, որոնք եղել են «ստրուկ ի ստրկաց արքունի»:

Սրա հետ միասին քրիստոնէութիւնը Հայաստանում այս ժամանակամիջոցում առաջ բերեց մի նոր, քաղաքական եւ կուլտուրական տեսակէտից վտանգաւոր դրութիւն: Քրիստոնէութեան շնորհիւ հայերը կրօնապէս հեռացան պարսիկներից եւ մօտեցան յոյներին: Սասանեան պարսիկ թագաւորները, առանց այն էլ կրօնամոլ, այս փոփոխութիւնը նկատեցին իբրեւ մի շատ վտանգաւոր իրողութիւն Պարսկաստանի շահերի համար, որովհետեւ կրօնական միութեան շնորհիւ հայերը քաղաքականապէս էլ մօտենում էին Յունաստանին, իսկ հայերի միանալը յոյների հետ՝ շատ կարեւոր, գուցէ եւ վճռական նշանակութիւն ունենար այս երկու մեծ պետութիւնների դարաւոր մրցութեան լուծման համար: Ուստի Սասանեան թագաւորները թշնամաբար սկսեցին նայել ո՛չ միայն քրիստոնէութեան, այլ եւ այդ կրօնը դաւանող ազգի ու թագաւորի վրայ: Քրիստոնէութեան շնորհիւ Հայաստանը վաստակեց մի անհաշտ ու հզօր թշնամի, որ շատ շուտով վերջ դրեց նրա քաղաքական ինքնուրոյնութեան արտաքին մնացորդին (Արշակունիների թագաւորութեան) եւ վճռաբար ձեռնարկեց քրիստոնէութիւնը բնաջինջ անելու Հայաստանից: Իսկ յոյները, իրանց կողմից, ամենեւին հոգ չը տարան օգտուելու իրանց համար նպաստաւոր դրութիւնից՝ օգնութեան ձեռք չմեկնեցին հայերին (քաղաքական շահերը այսպէս էին հասկանում նրանք). եւ միեւնոյն ժամանակ աշխատում էին յունացնել իրանց բաժին ընկած Հայաստանը, որի համար, ի միջի այլոց, շատ յարմար միջոցներ էին յունարէն լեզուով հայոց եկեղեցիներում պաշտամունք կատարելը եւ հայոց կաթողիկոսների՝ յոյն մետրապոլիտներից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալը:

Քաղաքակրթութեամբ էլ Հայաստանը այն ժամանակ, ինչպէս եւ միշտ, ենթարկուած էր դրացի աւելի քաղաքակիրթ եւ հզօր ազգերի ազդեցութեանը: Մանաւանդ մեծ էր Պարսկաստանի, մեր դարաւոր եւ արիւնակից հարեւանի ազդեցութիւնը, որի մէջ ընկղմուած էր հայութիւնը խորապէս:

Պաշտօնական գրագրութիւնները, կալուածական, տոհմական դոկումենտները եւ առհասարակ որեւէ գրագրութիւն՝ գրուած էին պարսկերէն: Պալատի խօսակցութեան լեզուն պարսկերէնն էր, քաղաքների, թագաւորների անունները՝ պարսկերէն, պետական կազմը, զինուորական, դատաստանական կարգերն ու կազմակերպութիւնը՝ պարսկական, զէնքերը, զգեստները, կերակուրները, կահարասիքը, արհեստները, հաւատալիքները, ծէսերը... բոլորը պարսկական: Սրան անհերքելի ապացոյց է մեր հինգերորդ դարի լեզուի բառարանը, որի մէջ հազարաւոր ամենագործածական բառեր, կեանքի բոլոր երեւոյթներին վերաբերեալ, պարսկերէն են եւ ցոյց են տալիս, թէ ո՛րտեղից են մտել մեր մէջ այդ բառերով նշանակուող առարկաներն ու հասկացողութիւնները:

Այս հետաքրքրական, դեռ չը մշակուած հարցը արժանի է առանձին ուսումնասիրութեան:

Այսպէս ուրեմն, հինգերորդ դարի սկզբին Հայաստանը թէ՛ քաղաքակա՜նապէս եւ թէ՛ կուլտուրապէս կանգնած էր կորստեան վիճի ափին. քրիստոնէութիւնը չէր պաշտպանում ազգայնութիւնը, չէր կրթում հոգին, այլ աւելի օտարացնում էր նրան, աւելի մօտեցնում օրհասական անկումը: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ եթէ այս դրութիւնը երկու դար էլ շարունակուէր՝ Արաբիայի անապատներից փոթորկուած մահմեդական նոր կրօնը ամենից առաջ կը տապալէր հայութիւնը, եւ այսօր ոչ հայ եւ ոչ հայի յիշատակ կը մնար աշխարհիս երեսին, այլ մահմեդական պարսիկներ եւ մասամբ քրիստոնեայ յոյներ, որոնք իրենց ծագումն էլ վաղուց մոռացած կը լինէին:

26 Ք.

Ինքնապաշտպանութեան բնագոյրը յատուկ է ոչ միայն անհատներին, այլ եւ հաւաքական մարմիններին՝ տոհմերին, համայնքներին եւ ազգերին: Հայ ժողովրդին սպառնացող կուլտուրական վտանգը զգացին այն ժամանակուայ ամենից լուսաւոր մտքերն ու զգայուն սրտերը, եւ իրանց բոլոր ոյժերը լարեցին՝ այդ վտանգի առաջն առնելու համար: Քաղաքական վերածնութիւնը այլ

<sup>26</sup> Մշակ, 1902, 31 հոկտ., Հ<sup>մ</sup> 241, էջ 1-2:

եւս անկարելի էր, քանի որ քաղաքական քայքայման պատճառները ոչ այնքան ներքին էին՝ որքան արտաքին, որոնց վրայ շէին կարող նրանք ազդել: Ուրեմն պէտք էր վերածնել ազգը կրօնապէս եւ կուլտուրապէս. պէտք էր ամրապնդել նրա կրօնա-բարոյական եւ ազգայնական հիմքերը, որպէս զի նա դիմանալ կարողանայ դարերի փոթորիկներին եւ ահեղ սասանումներին:

Եւ մենք տեսնում ենք հինգերորդ դարում մի եռանդուն, անձնանուէր գործունէութիւն, որի նմանը այլ եւս չը կայ մեր երկար պատմական կեանքի մէջ եւ շատ քիչ կայ ուրիշ ազգերի պատմութեան մէջ:

Ամբողջ հինգերորդ դարը ազգաշինութեան դար է մեր պատմութեան մէջ, եւ այս շինարարութեան երեք գլխաւոր սիւներն են. դարի սկզբում՝ հայոց գրերի գիւտը, դարի միջավայրում՝ Վարդանանց պատերազմը, եւ դարի վերջում՝ Գրւնայ եկեղեցական ժողովը: Այս երեք հաստատուն սիւների վրայ հիմնուեց մեր ազգի կրօնական եւ կուլտուրական շէնքը եւ շարունակում է մնալ մինչեւ այսօր, տասնեւիններորդ դարում միայն վերանորոգութիւն եւ ճարտարապետական ոճի բարեփոխութիւն կրելով:

Այս հսկայական դարաւոր շէնքի ճարտարապետը, նրա առաջին հիմքը դնողը, նրա գլխաւոր սիւնը կանգնեցնողն եղաւ մի հայ գիւղացի, Մեսրոպ-Մաշթոց անունով, որ Տարօն գաւառի (այժմեան Մուշ եւ գաւառը) Հացեկաց գիւղից էր, Վարդան անունով մէկի որդին: Նա սկզբում արքունական ծառայութեան մէջ էր գտնուում, քարտուղարի պաշտօն էր վարում թագաւորի դիւանատանը. նշանակում էր որ նա գիտէր պարսկերէն, յունարէն եւ ասորերէն եւ իր ժամանակի զարգացած մարդկանցից էր: Բայց շուտով նա թողնում է այս պաշտօնը. ինչպէս Խորենացին սուր է նկատել՝ նա «տեսնելով որ Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալու վրայ է», թողնում է աշխարհային կեանքը եւ մտնում է հոգեւոր կեանքի մէջ: Գուցէ հէնց այս ժամանակ նրա մէջ աղօտ միտք է ծագում՝ որեւէ միջոց գտնել այդ քայքայուած, կործանուելու մօտ տէրութեանը նեցուկ տալու համար. բայց ի՞նչ կերպով՝ նա ինքն էլ դեռ չը գիտէր: Բայց հոգեւորական կեանքի մէջ նա սկսում է մի անձնուրաց, ժողովրդի օգտին նուիրուած գործունէութիւն, որի ժամանակ հետզհետէ հասունանում է նրա գիտակցութեան մէջ ընկած առաջին սաղմը: Նա ժողովում է աշակերտներ, նրանց սովորեցնում է (ի հարկէ՝ ասորերէն ընթերցանութիւն եւ այս լեզուով ժամակարգութիւն), նրանց հետ միասին ճանապարհորդում է Հայաստանի գաւազան գաւառները՝ քարոզելու ժողովրդին, հեթանոսութեան հետքերը ջնջե-

լու: Քարոզութեան միջոցին, կրօնական գրքերը օտար լեզուներով կարդացուելուց յետոյ, նա հայերէն, ժողովրդին հասկանալի կենդանի լեզուով բացատրում է Ս. Գիրքը, թարգմանում է Աւետարանը, եւ այս ժամանակ նկատում է այն զմայլեցնող երեւոյթը, որ ժողովուրդը հայերէն, մատչելի խօսքը լսում է ուշադրութեամբ, ոգեւորում է, ուղղում է, այնինչ նա անտարբեր էր մնում երբ օտար, անհասկանալի լեզուով ժամերգութիւն ու պատարագ էր կատարւում: Ծագում է նրա մէջ լուսաւոր միտք՝ այնպէս անել, որ հայոց բոլոր եկեղեցիներում հայերէն լեզուով կատարուի ժամերգութիւնը: Բայց ի՞նչպէս. պէտք էր սրա համար հայերէն լեզուով թարգմանել ժամերգութիւնը եւ Ս. Գիրքը, իսկ սրա համար հարկաւոր էր հայերէն լեզուի գրեր ունենալ...

Այս բնական, մէկը միւսից բխող մտքերը այլ եւս հանգիստ չեն տալիս ժողովրդի օգտին նուիրուած Մեսրոպին: Այնքան սրանք լցնում [են] նրա հոգին, այնքան գրաւում նրան, որ նա գալիս է Վաղարշապատ, հայոց թագաւորանիստ եւ կաթողիկոսանիստ քաղաքը, դիմում է լուսամիտ եւ զարգացած Սահակ կաթողիկոսին, բաց է անում սիրտը նրա առաջ եւ նրա հովանաւորութիւնը խնդրում...

Մի քանի տարի տեւող յոգնեցնող, տոկուն աշխատանքից յետոյ Մեսրոպ-Մաշթոցին յաջողում է վերջապէս հնարել յարմար այբուբեն հայերէն լեզուի համար՝ այն այբուբենը, որ մինչեւ այսօր էլ գործ ենք անում. եւ նա օտարութեան մէջ երկար թափառելուց յետոյ՝ իր պանծալի գիւտն առած՝ դիմում է Հայաստան եւ դիմաւորում է խուռն բազմութեան ցնծալից աղաղակներով: Նրա այս դարձը՝ նրա աշակերտներից մէկը, Կորիւնը, համեմատում է Մովսէս մարգարէի Սինայ լեռնից իջնելուն՝ աստուածատուր տասնաբանեայ պատուիրանների տախտակները ձեռքին: Աւելի աջող նմանութիւն չէր կարելի գտնել: Քրիստոսի 404 թուին պատահեց յիշատակելի եւ նշանաւոր այս դէպքը:

Այս թուականից սկսւում է Հայաստանում մտաւոր կեանք, գրական գործունէութիւն: Երկու հաւասարապատիւ գործակիցները, Սահակ կաթողիկոսը եւ Մեսրոպ-Մաշթոցը, հոգի եւ ղեկավար են հանդիսանում այս գործունէութեան: Բացում են հարիւրաւոր դպրոցներ Հայաստանի զանազան կողմերում. հաւաքում են հազարաւոր ընտիր մանուկներ՝ հայերէն գրագիտութիւն սովորելու, որպէս զի ապագայում հոգեւոր հովիւներ դառնան հայոց եկեղեցուն: Հայերէն են թարգմանում Ս. Գիրքը, ժամագիրքը, եւ առաջին անգամ մայրենի լեզուով լսում է ժամասացութիւն հայոց եկեղեցում: Թարգմանում են ասորե-

րէնից եւ յունարէնից ամենակարեւոր, հոշակուած գրքերը՝ կրօնական, բարոյական եւ պատմական բովանդակութեամբ, որպէս զի հայերէն կարգալ սովորած սերունդը ունենայ մտաւոր սնունդ: Նորաբաց դպրոցներում ուսած աշակերտներից շատերը, որոնք առանձին ընդունակութիւններ էին ցոյց տալիս, ուղարկում են արտասահմանի ուսման կենտրոնավայրերը՝ Բիւզանդիոն, Ալեքսանդրիա, Աթէնք, որպէս զի բարձրագոյն ուսում ստանան եւ թարգմանութիւններ անեն: Այս անդրանիկ հայ ուսանողներից ոմանք, դեռ իրանց երկու մեծ ուսուցիչների կենդանութեան ժամանակ, վերադառնում են հայրենիք, մտաւոր պաշարով լցուած, եւ թեւ ու թիկունք են դառնում իրանց հայրերին՝ թարգմանելու, ուսուցանելու, քարոզելու գործում: Ոմանք էլ վերադառնում են աւելի ուշ, երբ Սահակն ու Մեսրոպը վախճանած էին, բայց դարձեալ նուիրում են նոյնպիսի արդիւնաւոր գործունէութեան: Բարձր կրթութիւն ստացած աշակերտները արդէն նեղն են զգում լոկ թարգմանչական աշխատանքը, անբաւարար են համարում ուրիշների մտքի բերքերով հայ ժողովրդին կերակրելը. պահանջ է զգացում արդէն ազգային ինքնուրոյն գրականութեան, որ երկշոտ քայլերով սկսուելով հինգերորդ դարի քառասնական թուականներին՝ կարճ ժամանակում զմայլելի աշողութեան է հասնում՝ Ագաթանգեղոսի, Փաւստոսի անունը կրող պատմութիւնները, Եղիշէի, Փարպեցու, Խորենացու պատմութիւնները, Եզնիկի կրօնա-փիլիսոփայական գրուածքը եւ ուրիշ շատ գործեր այս դարում գրուեցին, Մեսրոպի ձեռնաստիւն աշակերտների կամ սրանց աշակերտների ձեռքով:

Դժուար է ամփոփ կերպով արտայայտել այս մտաւոր մեծ գործունէութեան բոլոր հետեւանքները, որ մի ամբողջական վերածնութիւն եղաւ բոլոր ազգի համար: Այսքան ասենք, որ քրիստոնէութիւնը շարժառիթ դառնալով գրերի գիւտին՝ ինքն էլ հասկանալի եւ սիրելի դարձաւ հայ ժողովրդին. հայը, որ շորորդ դարում ընդունել է մկրտութիւն ջրով՝ այս դարում մկրտուեց նաեւ հոգով, եւ Վարդանանց պատերազմի ժամանակ հազաւ նաեւ նահատակի արիւնաներկ ծիրանին: Եկեղեցին ազատուեց օտար ազդեցութիւններից եւ դարձաւ զուտ ազգային սեփական անկախ նուիրապետութեամբ, պաշտամունքներով, ծէսերով ու կազմակերպութեամբ: Գրագիտութիւն տարածուեց ժողովրդի մէջ. ստեղծուեց ազգային մատենագրութիւն, հարուստ պատմագրութեամբ, որ ոչ միայն մեզ մատուցել է անգնահատելի ծառայութիւններ, այլ թանկագին ստացուածք է կազմում նաեւ ընդհանուր գրականութեան շտեմարանում: Արդար է ասել հայոց գրի համար, թէ «Նովաւ կեամք, եւ շարժիմք, եւ եմք»:

Վերածնութեան այս շարժման մէջ մօտ քառասուն տարի միասին եւ համերաշխ գործում էին մեր երկու լուսաւորիչները, Սահակ կաթողիկոսը եւ Մեսրոպ-Մաշթոցը, որոնց երախտագէտ սերունդը սրբերի կարգն է դասել եւ ամէն տարի նրանց յիշատակը կատարում է եկեղեցում: Սակայն, կարծես երկուստեք համաձայնութեամբ, նրանք աշխատանքը բաժանել էին իրար մէջ: Հայրապետը զբաղուած էր յատկապէս Ս. Գրքի եւ եկեղեցական այլ գրքերի թարգմանութեամբ եւ եկեղեցու ներքին բարեկարգութեամբ, այն-ինչ Մեսրոպ-Մաշթոցը, գրերը հնարելու վրայ երեք տարի աշխատելուց յետոյ՝ անընդհատ ճանապարհորդում է Հայաստանի զանազան կողմերը, դպրոցներ է բաց անում, ուսուցիչներ հասցնում, նոր գրագիտութեան դժուարութիւնները հարթում, ինքն անձամբ սովորեցնում: Նրա շատ աշակերտների մէջ յատկապէս յիշելու է Եգնիկին, Կորիւնին, Ղեւոնդ երէցին, Յովսէփ կաթողիկոսին եւ Վարդան Մամիկոնեանին, որ առանձին առարկայ է եղել նրա հոգացողութեան: Նա գնում է Աղուանք եւ Վրաստան՝ այս ազգերի համար էլ, ինչպէս վկայում են նրա կենսագիրները, այբուբեն հնարում, գնում է Բիւզանդիոն, որպէս զի թոյլտուութիւն ձեռք բերէ Հայաստանի յունական մասում էլ հայերէն գրագիտութիւն տարածելու եւ հայ լեզուով եկեղեցիներում պաշտամունքը կատարելու, որ եւ աջողում է նրան: Նա կրթական գործի հիմնադիրը, տարածողն ու հոգին է եղել Հայաստանում մօտ քառասուն տարի տեւող անընդհատ, անդադրում աշխատանքով, եւ խորենացին, նրան ամենից լաւ ճանաչողն ու գնահատողը, նրան տուել է արժանաւոր եւ պատուաւոր մակդիր՝ «Ուսուցանող աշխարհիս Հայոց»:

Շուտով ուրեմն կը բոլորուի տասն եւ հինգ դար հայոց լուսաւորութեան սկզբնաւորութիւնից, եւ ներկայումս ապրող հայ ժողովուրդը պարտաւոր է որեւէ արժանաւոր բան անել Մեսրոպ-Մաշթոցի յիշատակին: Եթէ մեր նախնիքը այնքան հասկացել են հայոց գրի նշանակութիւնը եւ այնքան երախտապարտ են եղել, որ նրա հնարողին անմահացրել են ամենից պատուաւոր միջոցով՝ տօնելի սրբերի կարգը դասելով, մենք չենք կարող անզգայ եւ ապերախտ գտնուել այդ նշանաւոր գիւտի եւ գտիչի առաջ:

Մեր կողմից՝ մենք մտադիր ենք, ի յիշատակ հայոց գրերի գիւտի հազարհինգհարիւրամեակին, իբրեւ երախտագիտական նուէր ս. Մեսրոպ-Մաշթոցի անուան, հրատարակել հայոց հին եւ նոր պատմագիրների լիակատար ժողովածուն, «Պատմագիրք Հայոց» անունով:

Այս Պատմագիրքը բովանդակելու է իր մէջ յիսուն հայ հեղինակների

պատմական աշխատութիւնները, ժամանակագրական կարգով: Այս հեղինակներն են՝ Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Սեբէոս, Զենոբ (Յովհան Մամիկոնեան), Ղեւոնդ երէց, Թովմայ Արժրունի, Յովհաննէս կաթողիկոս, Ուխտանէս, Մեսրոպ երէց, Ստեփանոս Ասողիկ, Արիստակէս Լաստիվերտցի, Ներսէս Շնորհալի (Ողբ եղեսիոյ), Կիրակոս Գանձակեցի, Մովսէս Կաղանկատուացի, Սամուէլ Անեցի, Վարդան Բարձրբերդցի, Մատթէոս Ուռույցեցի, Մխիթար Անեցի, Մաղաքիա արեղայ, Սմբատ Գունդստաբլ, Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օրբէլեան, Հեթում Պատմիչ, Աբուսահլ Պատմիչ, Գրիգոր Խլաթեցի, Թովմայ Մեծոփեցի, Մինաս վարդապետ Համդեցի, Յովհաննէս աւագ երէց Կամենիցոյ, Առաքել Դաւրիթեցի, Զաքարիա Սարկաւագ, Ազոստինոս Բաջեցի, Եսայի Հասան-Ջալալեան, Պետրոս դի Գիլանենց, Դաւիթ Բէգ (Ստ. Վ. Շահումեան), Աբրահամ Կրետացի, Սիմէոն կաթողիկոս (Զամբո), Զաքարիա Ազուլեցի, Թովմաս Խոջամալեան, ժամանակագրութիւն (Անձանօթի, Մանանայից), Յովհաննիսիկ վարդապետ, Վահրամ Բաբունի, Մարտիրոս Երզնկացի, Սիմէոն Ապարանցի, Երեմիա Զէլէպի, Մաղաքիա Ըէվահիրճեան, Աւետիք երէց Ղափանցի (վերջին վեցը այն դէպքում, եթէ կարողացանք ձեռք բերել գրչագիրներինց ընդօրինակութիւններ): Այս ձեռնարկութիւնը յաջողութեամբ գլուխ գալուց յետոյ՝ կարելի կը լինի հրատարակել երկու լրացուցիչ հատոր էլ, որոնցից առաջինի մէջ կը մտնեն՝ հայերէն թարգմանուած հին օտարազգի պատմագիրներ՝ Եւսեբիոս (ժամանակագրութիւն), Լաբուբնայ, Սոկրատ, Միխայէլ Ասորի եւ Զուանշիր (պատմութիւն վրաց). իսկ երկրորդի մէջ՝ ընտիր հայ հեղինակներ ոչ-պատմական բովանդակութեամբ, ինչպէս՝ Եգնիկ, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս (Թղթերը), Մխիթար Գօշ եւ այլն<sup>27</sup>:

28 Պ.

Ամեն ջանք պէտք է գործ դրուի, որ այս հրատարակութիւնը հնար եղածին չափ կատարեալ լինի արտաքին եւ ներքին յատկութիւններով:

Արտաքին յատկութիւնները կայանալու են հետեւեալում. պէտք է թուղթը

<sup>27</sup> Հետաւրբիւր է, որ, ի տարբերութիւն սրա, Ղ. Ալիշանի «Հայապատում»-ի՝ «Բնիկ պատմիչ հայոց» շարքն սկսում է «Ագաթանգեղոս» եւ աւարտում «Հ. Միխայէլ վ. Զամբեան» անուններով եւ ունի 1-158 համարներ. տե՛ս Հ. Ղեւոնդ վ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց. Ա. Պատմիչք Հայոց, Բ. Պատմութիւնք Հայոց, Վեներտիկ, ի վանս Ս. Ղազարու, ՌՅԾԱ. - 1901, էջ 35-139:

<sup>28</sup> Մշակ, 1902, 1 նոյ., չ. 242, էջ 1-25:

ազնիւ լինի, տպագրութիւնը խիստ մաքուր, տպագրական սխալներից ազատ, շքեղ կազմով յատուկ պատուիրուած կլիշէով: Մէկ խօսքով՝ արտաքինի կողմից հրատարակութիւնը պէտք է յիշեցնէ եւրոպական կամ Վենետիկի Մխիթարեանների վերջին տպագրութիւնները:

Ներքին յատկութեան տարրերը կազմելու են սրանք<sup>29</sup>.

1. Իւրաքանչիւր հեղինակի սկզբից դրուելու է սեղմուած առաջաբան, որի մէջ հաղորդուելու են հակիրճ, ստոյգ տեղեկութիւններ հեղինակի անձի եւ պատմութեան գրուելու ժամանակի մասին, այդ պատմութեան նախկին տպագրութիւնները, նոր տպագրութեան բնագիրը, համեմատուած ձեռագիրները, համեմատողների անունները:

2. Իւրաքանչիւր հեղինակից յետոյ դրուելու է մանրամասն ճիշտ ցանկ նրա մէջ գործ ածուած յատուկ անունների:

3. Ի նկատ կառնուեն այն ուղղագրութիւնները, որոնք առաջարկուած են զանազան բանասէրների կողմից՝ որ եւ է հեղինակի այս կամ այն աղաւաղուած տեղը ուղղելու համար:

4. Ամենայն զգուշութիւն գործ կը դրուի՝ հարազատ եւ լիակատար կերպով հրատարակելու հեղինակի գործը, որ եւ է ուղղագրական փոփոխութեան մասին, որ կը մտցուի բնագրում՝ հաշիւ կը տրուի ծանօթութեան մէջ:

5. Հեղինակները, մանաւանդ հնագոյնները, նորից կը համեմատուեն ձեռագիրների հետ եւ աւելի կատարեալ ու հարազատ կերպով լոյս կընծայուեն՝ քան մինչեւ այժմ եղած հրատարակութիւնները: Այս հեղինակների շարքումն են ի միջի այլոց՝ Փաւստոս, Ղազար Փարպեցի, Սեբէոս, Ուխտանէս, Մովսէս Կաղանկատուացի, մանաւանդ Մովսէս Խորենացի, որ կը տպագրուի ընդարձակ ընթերցուածքներով՝ էջմիածնի ձեռագիրների բաղդատութեամբ:

6. Այս ծրագիրը կարող է ենթարկուել մանր փոփոխութիւնների, օրինակ՝ հեղինակները ճիշտ ժամանակագրական կարգով դասաւորելով, երկրորդական, մանր հեղինակներ աւելցնելով եւ այլն. բայց հիմնական կէտերում փոփոխութիւն չի կրի:

Հայ պատմագիրների մի լիակատար ժողովածու հրատարակելու միտքը յղացուած էր դեռ մի քանի տարի առաջ, եւ յատկապէս Ալ. Քալանթարի կողմից, առանց սակայն գրերի գիւտի յիշատակի հետ կապելու: Նախկին Հրատա-

<sup>29</sup> Յաջորդող՝ ըստ պարբերութիւնների տրոհումը եւ 1-6 համարակալումը մերն է, «Մշակ»-ում շարադրանքը միայաւ է, թուերի փոխարէն էլ գծիկներ են:

րակչական ընկերութիւնը պէտք է ձեռնամուխ լինէր այս գործին, բայց երբ տպուէց յայտարարութիւն Գ. Ալիշանի «Հայապատում»ի հրատարակութեան մասին, այդ մտադրութիւնը առ կախ մնաց, որովհետեւ կարծում էինք, թէ «Հայապատում»ը ոչ այլ ինչ կլինի՝ եթէ ոչ մեր մտածած հրատարակութեան նման մի բան: Այնուհետեւ դուրս եկաւ «Հայապատում»ը՝ բոլորովին տարբեր գործ եւ տարբեր նպատակի ծառայող: Մօտենում էր գրերի գիւտի դարադարձը, եւ մենք՝ այդ հրատարակութիւնը կապելով նուիրական տօնի հետ՝ ստիպուած եղանք, արդէն իբրեւ մի մասնաւոր մարդ, նախաձեռնող հանդիսանալ այս ծանր գործին:

Այս միտքը արծարծուել է մի քանի շրջանակներում: Եղել են առաջարկողներ, որ հրատարակութիւնը լինի աշխարհաբար թարգմանութեամբ, ասելով, որ այս կերպով աւելի կարելի է յուսալ նիւթական օժանդակութեան, որ հրատարակութիւնը աւելի կը տարածուի ժողովրդի մէջ, ուրեմն եւ աւելի օգտակար կը լինի: Մենք, մի ըրպէ տատանուելուց յետոյ, համաձայնեցինք այս առաջարկութեան. բայց յետոյ երկու բարեկամ եւ բանիբուն անձ (կարիք չենք զգում ծածկելու այս անունները՝ Ալ. Քալանթար ու Լէօ) սաստիկ հակառակեցին աշխարհաբար հրատարակութեան մտքին եւ անպայման առաւելութիւն տուին գրաբար հրատարակութեան:

Քանի որ այս հարցը հասարակական նշանակութիւն ունի եւ մեր ընթերցողներից շատերին էլ կը հետաքրքրէ՝ մէջ բերենք գլխաւոր առարկութիւնները աշխարհաբար հրատարակութեան դէմ:

1. Մեր պատմական հեղինակներից ամենամեծ մասը չէ կարող ծառայել իբրեւ ընթերցանութեան նիւթ. նրանք պատմական աղբիւրներ են՝ ուսումնասիրութեան նիւթեր, որոնց հիման վրայ պէտք է գրուեն իսկական՝ ընթերցանելի եւ մատչելի պատմութիւններ: Այսպիսի հեղինակների աշխարհաբար հրատարակութիւնը, ուրեմն, դարձեալ չի կարգացուի, բայց մի եւ նոյն ժամանակ եւ չի ծառայի գիտնականի համար իբրեւ աղբիւր ուսումնասիրութեան եւ նիւթեր հաւաքելու:

2. Վերջին պատմագիրների մեծ մասը գրուած է այնպիսի լեզուով, որ կարիք չունի թարգմանուելու. աշխարհաբար լեզուով կարգացողը նրանց էլ կը հասկանայ առանց դժուարութեան:

3. Գեղարուեստական լեզուով գրող, ընթերցանելի պատմագիրներից մի մասը արդէն թարգմանուած է աշխարհաբար, այնպէս որ ընթերցանութեան

պահանջին կարող է տալ բաւարարութիւն (օրինակ՝ հորենացի, Եղիշէ, Փարպեցի, Ար. Լաստիվերտցի. թարգմանուած, բայց դեռ չէ տպագրուած նաեւ Փաւստոս). հազիւ 4-5 հեղինակ են մնում թարգմանելու արժանի, որոնք վաղ թէ ուշ, մասնաւոր ձեռնարկողների ձեռքով, կարող են թարգմանուել:

4. Աշխարհաբար հրատարակութիւնը, պահանջելով բազմաթիւ աշխատողներ, տարբեր ճաշակներով ու հայեացքներով, զանազան պայմաններով չէ կարող գլուխ գալ ներկայ հանգամանքներում, եւ անշուշտ, կիսակատար կը մնայ:

Այս եւ սրա նման լուրջ առարկութիւնները միանգամայն համոզիչ էին, եւ մենք նորից, անդառնալի կերպով, փարեցանք մեր սիրած ու գուրգուրած գաղափարին՝ գրաբար բնագիրների հրատարակութեան, որի օգուտները անուրանալի են:

Այս օգուտները հասկանալու համար պէտք է թէկուզ մի հարեւանցի հայեացք ձգել մեր պատմագիրների հրատարակութեան դրութեան վրայ մինչեւ այժմ:

Այս հրատարակութիւնները եղել են զանազան տեղերում ու ժամանակներում՝ տարբեր պատրաստութեամբ մարդկանց ձեռքերով եւ տարբեր ուղղութեամբ ու նպատակներով: Այս պատճառով շատ զանազանում են նրանք միմեանցից ներքինով եւ արտաքինով: Ոմանք ունեն ձեռագիրների տարբեր ընթերցուածքներ (որոնց մէջ մի քանիսը լիակատար, միւսները սահմանափակ թուով), միւսները՝ ոչ: Մի քանիսը տպագրուած են մի քանի ձեռագիրների բաղդատութեամբ, միւսները՝ առաջին պատահած, գուցէ սխալաշատ ձեռագրից: Ոմանք ունեն յատուկ անունների ցանկեր, միւսները չունեն: Ոմանք բաւական արտաքին վայելչութիւն ունեն, համեմատաբար քիչ սխալներով, իսկ միւսները՝ սաստիկ վատ տպագրութիւն, անպիտան թուղթ, տառասխալներով լիքը: Վերջապէս՝ հրատարակութիւններից ոմանք ենթարկուած են կամաւոր կամ ակամայ աղաւաղումների: Կան եւ այնպիսի հեղինակներ, որոնք կիսատ են տպագրուած՝ միակ ծանօթ թերի ձեռագրից, այն-ինչ յետոյ գտնուել են անթերի ձեռագիրներ, որոնցից դեռ հրատարակութիւն չէ եղած:

Այս բազմատեսակ պակասութիւններով հանդերձ՝ եղած հրատարակութիւններից շատերը մատչելի չեն ոչ միայն ժողովրդին, այլ նոյն իսկ մասնագէտ պատմաբաններին ու բանասէրներին: Չը խօսելով այն հեղինակների մասին, որոնք մինչեւ այժմ էլ դեռ տպագրուած չեն, ուրեմն եւ մատչելի չեն ընդհան-

րութեան՝ տպագրուածներից շատերն էլ կամ սպառուած են, կամ տպագրուած են որ եւ է՝ այժմ անգիւտ պարբերական հրատարակութեան կամ գրքի էջերում, կամ վերջապէս փթում են որ եւ է անծանօթ անկիւնում: Մեր վերը յիշած յիսուն պատմագիրներից հազիւ թէ կէսը կարելի լինի գտնել եւ գնել. միւս կէսը հրատարակում չը կայ, եւ միայն բախտի բերմամբ կարելի է մի օրինակի հանդիպել մի հնավաճառի մօտ կամ որ եւ է ընտանիքում: Այս պատմագիրների լիակատար ժողովածուն չը կայ ոչ միայն մասնաւոր՝ թէկուզ մասնագէտ անձերի մօտ, այլ մինչեւ անգամ յայտնի հաստատութիւնների մէջ: Բացառութիւն կարող են կազմել 3-4 անձ կամ հաստատութիւն, որոնք գուցէ ունենան լիակատար ժողովածու:

Սրանց վրայ պէտք է աւելացնել եւ մի ուրիշ աննպաստ հանգամանք, այն է՝ հայ պատմագիրների գնի թանգութիւնը: Հաշուելով վաճառուող 20 պատմագիրների ընթացիկ գները (Վենետիկի հրատարակութիւնները՝ հէնց միաբանութեան ցուցակով, ֆր. = 40 կ. հաշուելով), տեսնում ենք, որ նրանք, առանց կազմի, արժէն մօտ 24 ռուբլի: Այս հաշուով բոլոր հայ պատմագիրները, եթէ կարելի լինէր գտնել եւ գնել՝ պէտք է արժենային, առանց կազմի, աւելի քան յիսուն ռուբլի: Այս հանգամանքը, հարկաւ, չէ կարող նպաստել նրանց շուտ եւ շատ ծախուելուն եւ ընթերցողների աւելի ընդարձակ շրջանի մէջ տարածուելուն:

Այս բոլորից յետոյ պարզ է, որ հայ պատմագիրների լիակատար ժողովածուի լաւ հրատարակութիւնը հերթական անհրաժեշտ պահանջ է: Այս անհրաժեշտութիւնը զգացել եւ զգում են մեր հին գրականութեամբ պարապողները, խօսքով ու գրով, նոյն-իսկ յատուկ բրոշիւրներով ցանկութիւն [են] յայտնել, որ օր առաջ լոյս տեսնէ այսպիսի հրատարակութիւն՝ աղաւաղութիւններից մաքրուած եւ հնարաւոր եղածին չափ կատարեալ: Եւ ի՞նչ աւելի նպատակաշարմար ու գեղեցիկ բան կարելի էր անել հայոց գրերի գիւտի տասնեւհինգերորդ դարադարձի յիշատակին՝ եթէ ոչ հրատարակելով մեր հին մատենագրութեան ամենից հետաքրքրական ու կարեւոր մի մասը՝ հին հայ պատմագիրները, ներքին եւ արտաքին առաւելութիւններով ճոխացած եւ գնով մատչելի: Այսպիսի հրատարակութիւնը մի կողմից զարկ կը տար մեր հին գրականութեան պատմութեան ուսումնասիրութեանը եւ միւս կողմից կը տարածուէր ժողովրդի աւելի ընդարձակ շրջանում: Ի՞նչ աւելի հաճոյական նուէր կարելի կը լինէր մատուցանել ս. Մեսրոպ-Մաշթոցին նրա նշանաւոր գիւտի յիշատակին,

եթէ ոչ նրա մատների գործը, նրա աշխատանքի պտուղը՝ հայոց գրի ամենալաւ փունջը՝ Հայոց Պատմագիրքը: Ինենք այս թանգագին նուէրը ս. Մեսրոպի գերեզմանի վրայ եւ ասենք. «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»:

«Պատմագիրք Հայոց» հրատարակութիւնը, բովանդակելով յիսուն պատմագիր, կը բաղկանայ աւելի քան 300 տպագրական թերթից, մօտ 5000 մեծադիր երկսիւնակ երեսներից, եւ բաժանուած կը լինի հինգ մեծ հատորի, իւրաքանչիւրը մօտ 1000 երես:

Հրատարակութիւնը կարժեհայ, հաշուելով միայն թուղթը, տիպը, սրբագրութիւնը եւ կազմը, ոչ պակաս քան տասներկու հազար ռուբլի (մի հազար օրինակ տպելու համար):

Մենք հոգով ցանկանում ենք, որ այս հրատարակութեան մէջ մասնակցութիւն ունենան որչափ կարելի է շատ հայ անհատներ, թէ՛ մտաւոր աշխատակցութեամբ եւ թէ՛ նիւթական օժանդակութեամբ: Յանկանում ենք դարձեալ, որ հրատարակութիւնը այնքան էժանագին լինի եւ այնքան շատ տպագրուի, որ ինքն իրան տարածուի հայ ժողովրդի բոլոր խաւերում, տարածուի այնպէս, ինչպէս տարածուած է Ամերիկեան ընկերութեան հրատարակած Աստուածաշունչը:

Այս ցանկութիւններն իրագործելը այնքան մեզանից չէ կախուած, որքան բանասէր եւ բարեսէր ազգայիններից, որոնց ամէն մի աշակցութիւնը, մտաւոր թէ՛ նիւթական, աննախանձաբար եւ շնորհակալութեամբ կը յիշուի հրատարակութեան վերջում: Մեր բանասէր եղբայրակիցներին, մանաւանդ որոնք մօտ են գտնուում գրչագիրների պահեստներին, մենք առանձին դիմում կանենք անձամբ եւ նամակներով, եւ լիայոյս ենք, որ նրանք եռանդուն մասնակցութիւն յանձն կառնեն այս հասարակօգուտ աշխատութեան մէջ:

Առաջին հատորի տպագրութիւնը մտադիր ենք սկսել առաջիկայ յունուարին եւ վերջացնել 1904 թուին, մինչեւ ս. Մեսրոպի տօնի օրը (ամառը): Յաջորդ չորս հատորները լոյս կը տեսնեն այնուհետեւ՝ 3-4 տարուայ ընթացքում, մօտաւորապէս տարեկան մի հատոր:

\* \* \*

## 30 ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

## ՄՈՌԱՅՈՒԱ՞Ծ Թ՛Է ՈՉ

Վեներաբիկ, 26<sup>31</sup> նոյեմբեր 1903

Մեծապատի Տէր Ստ. Մալխասեանց,

«Ընդունած եմ զձեր<sup>32</sup> 17/30 նոյեմբեր 1902 նամակն, եւ 23 դեկտեմբեր 1902/5 յունուար 1903 յանձնարարեալ նամակն: Երէկ ընկալայ զյանձնարարեալ թուղթդ 4/17 նոյեմբերի, եւ ահա միովս կը պատասխանեմ ձեր երեք գրութեանց:

Վերջին նամակիդ մէջ կը հաճիք կոչել զիս «հայոց մատենագրութեան այնպիսի սիրահար, նախնեաց քննական հրատարակութեան ջերմ քարոզող, մեր հեղինակների ուսումնասիրութեան վրայ մի ամբողջ կեանք մաշող, եւ հմտութիւնների մեծ համբար<sup>33</sup> ունեցող»: Շնորհակալ եմ ազնիւ վկայութեանդ: Արդարեւ գրեթէ 45 տարի է, որ պարապած եմ եւ կը պարապիմ հայերէն մատենագրութեան եւ լեզուի, «ամբողջ կեանքս մաշեցուցած եմ» (ձեր իսկ խօսքերով) զմեր հին հեղինակաց աղաւաղեալ բնագիրներն յարդարելու եւ լուսաբանելու: Անընդհատ եւ անխոնջ աշխատութեանս պտուղն եղած է՝ ընդ ամենայն երկու հազար երկու հարիւր (2,200) փրանկ. ստացած եմ 500 փրանկ Հայկական Բառաքննութեանս համար (Իզմիրեան մրցանակ), 500 փրանկ Հ. Ղեւոնդ Ալիշանի Հայբուսակի Քննադատութեանս համար (ձեռագիր), 1,000 փրանկ Կորին վարդապետիս համար, 200 ֆրանկ ալ ստացայ յետ Սիրելւոյս<sup>34</sup> մահուան ի Բանասիրի հրատարակչէն՝ երկու յօդուածոց համար. միահամուռ

<sup>30</sup> Մշակ, 1904, 19 նոյեմբերի, Հ<sup>մ</sup> 254, էջ 1-2: Հեղինակի «Ստ. Մալխասեանց» ստորագրութիւնը վերջից բերել եմք առաջ: Նորայրի այս նամակի բնագիրը տե՛ս Մաշտոցեան Մատենադարան, Նորայր Բիզանդագու թողօն, Հ<sup>մ</sup> 14<sup>40</sup> (հիմն Հ<sup>մ</sup> 235<sup>2</sup>. 252<sup>41</sup>), 3 թերթ (թ. 21-23): «Մշակ»ի տպագրի որոշ շեղումներ «Մ» պայմանանիշով գրել եմք տողատակով, շարադրանքի մէջ դնելով բնագրի ուղիղ ձեւերը: Բացի դրանից, երկու բառ, որ Մալխասեանցը տպագրել է «ոսրի» եւ «ֆրանկ» ձեւերով, նորայրը գրել է՝ «ոսրի» եւ «փրանկ»: շարադրանքի մէջ դրել եմք նորայրի գրածի նման, առանց միւսները որպէս ընթերցում նշելու: Նորայրի թողօնում գտնուող Մալխասեանցի թուարկուած նամակների բնագրերը տե՛ս ստորեւ՝ նամակ 1-3, իսկ նորայրի այս նամակի՝ Մալխասեանցի 30 դեկտ. 1903 թ. պատասխանը, որը եւս նորայրի թողօնում է, կրկին տե՛ս ստորեւ, նամակ 4:

<sup>31</sup> Մ 16 ] 26

<sup>32</sup> Մ գգէն ] զձեր

<sup>33</sup> Մ համբար ] համբար

<sup>34</sup> Մ Սիրելւոյս

2,200 փրանկ վարձատրութիւն իմ գրեթէ 45-ամեայ անդուլ աշխատանաց: 1882ի դեկտեմբերէն՝ յորում փոխադրուեցայ ի Ստոքհոլմ, մինչեւ յ30 մարտի 1899 (օր մահուան կնոջս), որ է ըսել՝ յընթացս 17 ամաց, ստացած եմ ի վերոյնշանակեալ գումարէդ լոկ 1,500 փրանկ (500 Հայքուսակի Քննադատութեան համար եւ 1,000 Կորիւն վարդապետի համար), եւ մի միայն այս ողորմելի 1,500 փրանկով կարողացած եմ օգնել մեր տնական ամենօրեայ ծախուց: Եթէ իմ հայագիտութիւնս ամեն տարի շահ բերած ըլլար ինձ գոնէ 3.000 ռուբլի, իմ սիրելի կինս ողջ էր այսօր, զի աշխատութիւնն է որ սպաննեց զինք տարածամ:

Իմ ժամանակիս հայերն երբէք հասկացած չեն, թէ ինչպիսի ծառայութիւն կարող էի մատուցանել ազգային գրականութեան: Բախեցի շահ եւ շահ դռներ, աղաչեցի, պաղատեցայ, ամենայն ինչ անօգուտ, եւ ոգեսպառ ժամավաճառութիւն: Եթէ գտնուած ըլլային երկու երեք մտացի եւ բարեսիրտ մեծատուններ՝ որ զիս, դատելով ի Բառաքնութենէս, ի Գաղղիերէն-հայերէն բառարանէս, ի Քննասիրէ, ի Տեղեկութեանցն<sup>35</sup> յԱսողիկ, ի *De l'Urgence* տետրակէս, յայլեւայլ քննադատական յօդուածներէս, ի Կորիւն վարդապետէ, եթէ, կ'ըսեմ, երկու երեք մտացի եւ բարեսիրտ մեծատուններ՝ զայդքանեաց եւ զայդպիսեաց երկասիրողն արժանաւոր համարէին քաջակերութեան եւ դրամական նպաստներու (ինչպէս զանազան ժամանակակից մերազգիներ բախտաւոր գտնուեցան հազարներով ռուբլի ստանալու ի խրախուսութիւն<sup>36</sup> իւրեանց աշխատանաց), 1882ի դեկտեմբերէն մինչեւ ի սեպտեմբեր 1903ի, քսան տարիէ աւելի, ես իբր կոճղ անպիտան ինկած շէի մնար ի սառնամանիս հիւսիսոյ, այլ կ'ոգեւորուէի հետզհետէ հրատարակելու զարդիւնս իմ քննութեանց եւ ուսումնասիրութեանց, բայց իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն եւ անտարբերութիւնն ի գերեզման յուղարկեց զիմ սիրելի ամուսինս, իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն եւ անտարբերութիւնն վաղուց սովամահ սատակած էր եւ զիս. եւ եթէ տակաւին կ'ապրիմ՝ պաշտելի ամուսինիս երախտիքն է այն, որ 1879էն ի վեր կերակրած է զիս եւ կը կերակրէ: Սիրելւոյս դրամագլխոյն տարեկան տոկոսիքներն չեն այնչափ առատ՝ որ լայն լայն ծախսեմ. բայց, գոհութիւն Աստուծոյ, ի մանկութենէ հետէ սովոր եմ զրկմանց, եւ ոչ մի տրտունջ չի խառնուիր այն անսպառ երախտագիտութեան ամենաջերմ զգացմանց հետ, որովք ամեն

<sup>35</sup> Մ Տեղեկութեանցս

<sup>36</sup> Մ > ի խրախուսութիւն

որ կ'օրհնեմ զՍիրելիս: Առողջութեանս վիճակն կը պահանջէր որ երթայի ի<sup>37</sup> Cannes, ի Nice, ի San Remo. հարկաւորեցայ շատանալ Վենետիկով, ուր կարելի է ապրիլ չափաւոր ծախուք: Աստ եւս կը շարունակեմ պարապիլ իմ նախնեաց<sup>38</sup>, շունելով ուստեք բարւոյ եւ օգտի ակնկալութիւն, մինչեւ որ գայ մահն եւ զիս անշնչացընէ:

Յուսամ այժմ իմացայք<sup>39</sup> թէ ինչո՛ւ չը պատասխանեցի ձեր նամակներուն: Զդառնացեալ սրտիս փղձուկն՝ մի անգամ՝ եւս թափէի. սաստիկ<sup>40</sup> վհատած եւ վաստակաբեկ՝ վերստին ամուլ բանակցութեան՝նց ձեռնարկէի: Կրեսո՞ս էիք որ կ'ուզէիք հրապուրել զիս: Յայտագրիդ մէջ կ'ըսէք. «Պատմագիրք Հայոց հրատարակութեան ամբողջ ծախսը՝ թէ՛ տպագրութեանը եւ թէ՛ աշխատակիցների վարձատրութիւնը, հաշուած է մօտաւորապէս 20,000 ռուբլի»: Առաջին նամակիդ մէջ ալ գրեցիք. «Մտադիր եմ մի փոքր չափով նիւթական վարձատրութիւն առաջարկել աշխատակիցներին»: Դուք գոհ էք մի փոքր չափով նիւթական վարձատրութենէ այնպիսի ծանր գործոյ համար՝ որ «լաւ գիտէք թէ պատուաւոր գործ պիտի ըլլայ եւ ամօթով պիտի չկացուցանէ<sup>41</sup> զձեզ գիտութեան առաջ»: Զիս բնաւ չի շլացըներ, բնաւ չի հրապուրեր մի փոքր չափով նիւթական վարձատրութիւնն. այդ «մի փոքր չափ»դ՝ շնչին չափ է ինձ համար, եւ կը նշանակէ ձրի հաղորդել ձեզ զիմ «բազմաթիւ եւ բազմախուռն» ուղղութիւններն նախնեաց մատենագրութեանց: Հերիք աշխատած եմ ձրի մեր օրհնեալ Ազգին համար՝ որ յաւուրց անտի Խորենացուց զիւր գրագէտներն անօթի, ծարաւ մեռցընել միայն գիտէ. ձրի ոչ ինչ կը գրեմ այսուհետեւ, ոչ ինչ կը հաղորդեմ ում եւ իցէ: Տպագրեալ նախնեաց մատենագրութեանց մէջ՝ 10,000է աւելի՝ մի քան զմի կարեւոր սրբագրութիւններ ունիմ, ինչպէս արդէն յայտարարած եմ այլուր: Կը փափագի՞ք իմ աշխատակցութեանս Պատմագիրք Հայոց հրատարակութեան համար. հաճեցէ՞ք հայթհայթել ինձ 25,000 (քսան եւ հինգ հազար) ռուբլի, յղեցէ՞ք ինձ զգումարդ, եւ ես կաշակցեմ ձեզ բոլոր զօրութեամբս:

Նամակս «գաղտնի» գրութիւն չէ՝ ձեր գիտութեան եւեթ սահմանեալ. իշխան էք հրատարակել զայն ամբողջապէս, եթէ կամիք:

<sup>37</sup> Մ > ի

<sup>38</sup> Մ նախնեաց (վստահ եմ՝ նկատի ունի իր «Նախնիք» աշխատութիւնը)

<sup>39</sup> Մ իմացաք

<sup>40</sup> Բնագրում շնչած յաջորդող՝ «յոզմած»

<sup>41</sup> Մ չը կացուցանէ

Խորին մեծարանօք՝

Խ. Մ. Նորայր Ն. Բիւզանդացի» (հասցէ):

*N. de Byzance Norayr  
Sant Angelo, Ponte dei Frati, 3536  
Venice (Italie)*

*Monsieur Stépan Malchasseantz*

*Մեծ. տէր Ստ. Մալխասեանց*

*Séminaire Arménien Nersisseean*

*Tiflis (Russie)<sup>42</sup>:*

Այս՝ «ի խորոց սրտից» ժայթքած փղծուկին, այս եղերերգութեան քան նամակին եւ կարողացայ միայն հետեւեալը պատասխանել 1903 թ. դեկտեմբերի 17ին:

[ՆԱՄԱԿ 4.]<sup>43</sup>

17 դեկտ./30 դեկտ. 1903, Թիֆլիս<sup>44</sup>

«Մեծապատիւ Տէր,  
Նորայր Բիւզանդ,

Ստացայ Ձեր նամակը՝ նոյեմբերի 26ից<sup>45</sup> (ն. տ.), ի պատասխան իմ երեք գրութեանց: Ձեր նամակը հետս տարայ մօտ օրերս էջմիածին եւ կարգացի հրատարակիչ-ընկերներիս, եւ նրանց գիտութեամբ եւ համաձայնութեամբ է՛ ինչ որ գրելու եմ:

«Հայոց Պատմագրքին» աշխատակցելու համար Ձեր դրած պայմանը՝ այն է՝ քսան եւ հինգ հազար թուրքի վարձատրութիւն տալ, մենք չենք կարող կատարել. ոչ այն պատճառով, որ թանկ<sup>46</sup> է՝ մտքի աշխատանքի<sup>47</sup>, այն էլ քա-

<sup>42</sup> Մ > N. de Byzance Norayr... Tiflis (Russie)՝ այս մասը Մալխասեանցը չի տպագրել:

<sup>43</sup> Մաշտոցեան Մատենադարան, Նորայրի թողօն, Հ<sup>տր</sup> 113 (նախկին Հ<sup>տր</sup> թղթ. 235, վա. 24): «[Նամակ 4]» Պատմագիրք Հայոցի խնդրով Նորայրին Մալխասեանցի գրած նամակների կարգային համարն է: Առաջին ետեմբ տե՛ս ստորեւ. վերջինը սկզբում ենք դրել՝ «Մշակ»ի հրատարակման պատկերը խախտած շիինելու նպատակով: «Մշակ»ում տպագրուածը եւ նամակի բուն բնագիրը միմեանց գրեթէ նշգրիտ համապատասխան են. այսուհանդերձ, տպագրի չնչին տարբերութիւնը նշել ենք «Մ» պայմանանիշով:

<sup>44</sup> Մ > 17 դեկտ... Թիֆլիս:

<sup>45</sup> Մ 16ից ] 26ից: Ամսաթիւը նամակի վերջում է, բերել ենք առաջ, 4րդ էջի վերը մեկե-նագրուած է. «N-ո 15. Prof. Stéfan Malkhassians,- 1903, Tiflis,- (Lettre quatrième)»:

<sup>46</sup> Մ թանգ

<sup>47</sup> Մ աշխատանքի համար

ուսուն եւ հինգ տարի տեւող աշխատանքի համար, ոչ մի վարձատրութիւն թանկ<sup>48</sup> չէ. այլ որովհետեւ այդպիսի գումար հայթայթել շենք կարող: Ամբողջ հրատարակութեան ծախսը, թէ՛ տպագրութեան եւ թէ՛ աշխատակիցների վարձատրութեան, ինչպէս գիտէք, հաշուած է մօտ 20,000 ռուբլի<sup>49</sup>, կարող է առ առաւելն հասնել մինչեւ 25,000 ռուբլիի. ուրեմն միայն Ձեր աշխատակցութիւնը պէտք է կրկնապատիկ<sup>50</sup> մեծացնէ մեր նախահաշիւը, որպիսի գումար ձեռք բերել մենք յոյս չունենք, ուստի ստիպուած ենք զուրկ մնալ Ձեր խիստ ցանկալի աշխատակցութիւնից:

Շնորհակալ եմ, որ թոյլ էք տալիս հրատարակել Ձեր նամակը. ես նրանից կօգտուեմ Պատմագրքի ընդհանուր Առաջաբանի կամ Յիշատակարանի մէջ. թող նա մի կողմից բացատրէ, թէ ինչո՞ւ Ձեր աշխատակցութեամբ զարդարուած չէ Պատմագիրքը, եւ միւս կողմից մի յիշատակ մնայ ապագայ դարերի համար՝ հայ գրագէտի ներկայ վիճակի մասին, ինչպէս մնացել է հորենացու դառն գանգատը իր դրութեան մասին (Բ. դբ.):

Արդար է Ձեր դառնութիւնը, Մեծապատիւ Տէ՛ր, բայց եթէ թոյլ կը տաք՝ կնկատեմ<sup>51</sup>, որ տասնեակ տարիներով հաւաքուած եւ կազմուած այդ դառնութիւնը թափում էք հէնց այն անձերի վրայ, որոնք ամենից քիչ արժան էին նորան, իրանք էլ Ձեր նման մայրենի հին գրականութեան օգտին ու պատուին նուիրուելով եւ հանգանակութեան (ու մուրացկանութեան) միջոցով դրամ հաւաքելով՝ մի մեծ գործ գլուխ բերելու. թափում էք այն գործի վրայ, որ ամենից աւելի պէտք է արժանանար Ձեր սիրուն ու խնամարկութեան:

Բոլոր սրտից մաղթելով Ձեզ քաջառողջութիւն եւ յաջողութիւն՝ մնում եմ առ Ձեզ խորին յարգանքով Խ. Մ.» (ստորագրութիւն) Ստ. Մալխասեանց<sup>52</sup>:

Սրանով վերջանում է թղթակցութիւնը իմ եւ Նորայր Բիւզանդացու մէջ՝ «Պատմագրքի» աշխատակցութեան նկատմամբ: Ես շարունակեցի նրան ուղարկել Դ. Փարպեցու մեր նոր հրատարակութիւնը թերթ-թերթ, մամուլից դուրս գալուց յետոյ, եւ նա բաց նամակով շնորհակալութիւն յայտնեց այս մասին:

Ձեմ կարծում, թէ որ եւ է մէկը կարողանայ մեղադրել ինձ կամ հրատարակիչ-ընկերներին, որ մենք անտես ենք արել Նորայր Բիւզանդացուն, ամեն

48 Մ թանգ

49 Մ ռուբլիի

50 Մ ~ կրկնապատիկ պէտք է

51 Մ կը նկատեմ

52 Մ (ստորագրութիւն) ] Ստ. Մալխասեանց

միջոց չենք գործ դրել նրա աշխատակցութիւնը ձեռք բերելու «Պատմագրքի» համար, կամ կարողացել բայց չենք կամեցել կատարել նրա պահանջը: Միւս կողմից՝ ես հեռու եմ որ եւ է մտքից՝ մեղադրելու Նորայր Բիւզանդացուն այդ նամակի համար, որով, ըստ երեւոյթին, պայման է առաջարկում, որ հաւասար է մերժողական պատասխանի: Պէտք է մտնել նրա հոգեկան դրութեան մէջ. մի մարդ, որ քառասուն եւ հինգ տարի անձնատուր է եղել գիտական աշխատութեան, ճանաչում է իր աշխատութեան բոլոր արժէքը, բայց չէ գտնում խրախուսանք, որ ունի պարտականութիւն իր ընտանիքը պահելու իր աշխատանքով, բայց փոխարէնը ապրում է իր կնոջ աշխատանքով, որ հայոց հին գրականութիւնը մշակում է՝ մի օտարուհու կեանքով ու մահով, իսկ հայերից օժանդակութիւն չէ գտնում, որ ներկայումս, յուսաբեկ, սգաւոր, ծերացած, անօգնական, օտար երկնքի տակ, ճգնում է մենակ, կերակրուելով նոյն օտարուհու թողած համեստ միջոցներով, հայերից դարձեալ անտես թողուած «մոռացուած մը».

պէտք է զգալ այս բոլորը, եւ այն ժամանակ նրա հոգու խորքերից՝ գրեթէ բռնի կորզուած նամակը մի արդար եւ կծու յանդիմանութիւն, հորենեան մի նոր ողբ կը ներկայանայ մեզ, որի առաջ ամօթապարտ եւ գլխակոր պէտք է կանգնի ամբողջ հայ ժողովուրդը:

Բայց արդեօք այս արդար յանդիմանութեան հրատարակութիւնից եւ «Մոռացուած մը» յօդուածից յետոյ, կը գտնուի՞ թէկուզ մի «մտացի եւ բարեսիրտ մեծատուն», որ, չեմ ասում Նորայր Բիւզանդացու դրած պայմանը կատարէր, դա երազ է, այլ գոնէ որ եւ է նիւթական օժանդակութեամբ խրախուսէր, ոգի ներշնչէր վաստակաւոր եւ վաստակաբեկ ծերունի գիտնականին. հայրենիքից ուղարկուած որեւէ նիւթական գոհաբերութեամբ ասէր Նորայր Բիւզանդացուն. «Ո՛չ, դու մոռացուած չես»:

\* \* \*

Իսկ այժմ, որպէս Մալխասեանցի այս յօդուածի լրացում-վաւերացում, Նորայրի թողօնում պահպանուած բնօրինակների հիման վրայ, նոյնութեամբ հրատարակում ենք Մալխասեանցի երկրորդ՝ «Մոռացուած թէ ոչ» յօդուածում յիշատակած Նորայրին ուղղուած նրա առաջին երեք նամակը՝ 1) 29 նոյեմբերի 1902 թ., 2) 4 յունուարի 1903 թ., 3) 17 նոյեմբերի 1903 թ.:

ՆԱՄԱԿ 1.<sup>53</sup>

17/29 նոյեմբերի 1902, Թիֆլիս

Մեծապատիւ բարեկամ,  
պ. Նորայր Բիւզանդացի,

Երկարամեայ լռութիւնից յետոյ՝ նախ ողջունում եմ Ձեզ:

Երեւի կարդացած կլինիք «Մշակի» 238, 241 եւ 242 համարներում յօդուածներս եւ ծանօթացած մտադրութեանս, որ է՝ կատարել մի լաւագոյն տպագրութիւն մեր նախնեաց պատմական մատենագրութեան, «Պատմագիրք Հայոց» ընդհանուր անուան տակ, նուիրուած Ս. Մեսրոպ-Մաշտոցի անուան, ի յիշատակ հայոց գրերի գիւտի 1500-ամեայ յրբելեանին:

Յօդուածիս մէջ յիշել էի, որ յոյսս դրել եմ մեր բանասէր եւ բարեսէր ազգայինների աջակցութեան վրայ. իմ յոյսս, ի միջիայլոց եւ գլխաւորաբար, Ձեր վրայ է եղել, մեծապատիւ բարեկամ, որովհետեւ համոզուած եմ, որ Ձեր աջակցութիւնը մի քանի աստիճանով պէտք է բարձրացնէ հրատարակութեան գիտական արժէքը, միջոց տալով սրբագրել այն բազմաթիւ աղաւաղութիւնները, որ սպրդած են բնագիրների<sup>54</sup> մէջ:

Արդ, այս նամակովս դիմում եմ Ձեզ, մեծապատիւ բարեկամ, խնդրելու Ձեր աշխատակցութիւնը «Հայոց Պատմագրքի» մէջ. Ձեր աշխատակցութիւնը, քանի որ Դուք ձեռագիրներից հեռու էք՝ պէտք է կայանայ գլխաւորապէս նրանում, որ այդ հրատարակութեան համար մատակարարէք Ձեր արդէն պատրաստ ուղղագրութիւնները՝ աղաւաղուած բնագիրները վերականգնելու համար:

Բնագիրները, տպագրուելուց առաջ, պէտք է համեմատուին էջմիածնի ձեռագրերի հետ, եւ այս բանը յաջողեցնելու համար այս շաբթուս մի քանի օրով գնալու եմ էջմիածին, որպէսզի այնտեղի կարող ոյժերից խնդրեմ աշխատակցութիւն: Բայց, ինչպէս գիտէք, միայն բաղդատութիւնները բաւական չեն վերականգնելու այնպիսի աղաւաղութիւններ, որոնք մտել են շատ հին ձեռագիրների մէջ եւ նրանցից անցել են նորագոյն (այժմ միայն ծանօթ) ձեռագիրներին: Ուրեմն յամենայն դէպս Ձեր ուղղագրութիւնները անհրաժեշտ կլինին գործի կատարելութեան համար:

Մանրամասնութիւնների մասին առանձին կպայմանաւոր[ու]ենք՝ եթէ

<sup>53</sup> Մաշտոցեան Մատենադարան, Նորայրի թղթօն, Հ<sup>մ</sup> 110 (նախկին Հ<sup>մ</sup> թղթ. 235, վաւ. 26):

<sup>54</sup> Նախ գրել է «նրանց», ապա սա առել է փակագծերի մէջ՝ «[նրանց]» եւ տողամիջին գրել՝ «բնագիրների»:

Դուք սկզբունքով համաձայնութիւն տաք իմ խնդրիս: Բայց եւ այնպէս պարտք եմ համարում յայտնել իմ գլխաւոր սկզբունքս՝ «տալ զկայսերն կայսեր», ոչ մի ուղղագրութիւն, որ կառնուի Ձեզանից՝ չի մնայ արանց յիշատակուելուն՝ թէ Դուք էք այն ընձեռել: Նոյն սկզբունքը գործ եմ դնելու, ի հարկէ, եւ ուրիշ բանասէրներ ղերաբերմամբ: Բացի սրանից՝ մտադիր եմ մի փոքր շափով նիւթական վարձատրութիւն առաջարկել աշխատակիցներին, որի քանակութիւնը դժբախտաբար չեմ կարող առայժմ որոշել:

Ձեր համաձայնութեան դէպքում, որին լիայոյս եմ, կխնդրէի՝ Ձեր կողմից յայտնել պայմաններ ամէն տեսակէտներով, նրանք նիւթ կլինին խորհրդածութեան, եւ յոյս ունիմ երկուստեք համաձայնութեամբ:

- Մի պարոն (Երուանդ Լալայեան) խնդրում է իմանալ, թէ ի՛նչ արժէ Ձեր ֆրանսերէն-հայերէն բառարանը:

Ընդունեցէ՛ք, մեծապատիւ բարեկամ, իմ խորին յարգանաց հաւաստիքը, որով մնում եմ առ Ձեզ միշտ՝

խ. ծ. Ստ. Մալխասեանց

Հասցէս - Tiflis (Caucase) Seminaire Nersisseean<sup>55</sup>:

ՆԱՄԱԿ 2.<sup>56</sup>

23 դեկտ./4 յունվ. 1902-3. Թիֆլիս<sup>57</sup>

Մեծապատիւ պարոն,  
պ. Նորայր Բիւզանդացի

Սրանից մի ամիս եւ 5 օր առաջ Ձեզ մի նամակ ուղարկեցի, որի մէջ յայտնելով «Պատմագիրք Հայոց» հրատարակութեան միտքը՝ խնդրել էի Ձեր թանկագին աշխատակցութիւնը, յայտնել էի նաեւ, որ աշխատակիցներին որոշուած է տալ վարձատրութիւն, սակայն առայժմ անկարող եմ որոշել քանակութիւնը. ցանկութիւն էի յայտնել, որ Դուք Ձեր կողմից որոշէիք վարձատրութեան քանակը եւ ուրիշ պայմաններ՝ եթէ պատրաստ ունէիք: Խնդրել էի, որ յամենայն դէպս բարեհաճէիք յայտնել Ձեր որոշումը իմ խնդրի ղերաբերմամբ, եւ

<sup>55</sup> Սրանից ցած՝ մեքենագրուած՝ «N-<sup>o</sup> 12. Prof. Stefanos Malkhassians, - 1902, Tiflis, - (Lettre première)»:

<sup>56</sup> Նորայրի թողօն Հ<sup>մ</sup> 111 (նախկին Հ<sup>մ</sup> թղթ. 235, վաւ. 27):

<sup>57</sup> Այլ, գուցէ՛ Նորայրի ձեռնով, ակելի բաց գոյնի թամախով կրկնած-նշգրտած՝ «23 դեկտեմբեր 1902/5 յունուար 1903»:

եթէ սկզբունքով ընդունէիք յանձն առնել աշխատակցութիւն (Ձեր ուղղագրութիւններով պատմագիրների աղաւաղուած բնագիրներին), մանրամասնութիւնները կմշակէինք նամակագրութեան միջոցով եւ անշուշտ համաձայնութեան կգայինք:

Այս նամակիս մինչեւ այսօր պատասխան չստացայ: Ենթադրելով միակ կարելին, այն է, որ նամակս Ձեր ձեռքը չէ հասել\*, գրում եմ նորից նամակ, այս անգամ՝ ապահովեալ:

Նամակիս հետ դնում եմ եւ մի տպագրուած Յայտագիր, որից կտեղեկանաք հրատարակութեան մանրամասնութիւնների հետ:

Խնդրում եմ նորից, որ բարեհաճիք երկտողով պատասխանել իմ խնդրին, որ նոյնպէս միւս երկու հրատարակիչ-ընկերներիս խնդրին է:

Ընդունեցէք խորին յարգանքս, որով միշտ մնում եմ առ Ձեզ՝

Ստ. Մալխասեանց

Հասցէս՝ Յայտագրի տակ<sup>58</sup>:

ՆԱՄԱԿ 3.<sup>59</sup>

4/17 նոյեմբերի 1903, Թիֆլիս

Մեծապատիւ տէր,  
պ. նորայր Բիւզանդացի,

Սրանից մի տարի առաջ Ձեզ գրել էի նամակ եւ յայտնելով ձեռնարկածս «Պատմագիրք Հայոց» քննական հրատարակութեան մասին՝ խնդրել էի Ձեր թանկագին աշխատակցութիւնը: Ձեր աշխատակցութիւնը, ինչպէս գրել էի՝ պէտք է կայանար գլխաւորապէս նրանում, որ ինձ միջոց ընձեռէիք օգտուելու Ձեր բազմաթիւ ուղղագրութիւններից՝ պատմագիրների աղաւաղուած տեղերը վերականգնելու համար: Առաջարկել էի մի քանի էական պայմաններ, ի միջի այլոց՝ մի որոշ վարձատրութիւն տալ Ձեր գործ դրած աշխատանքի համար եւ խնդրել էի, որ բարեհաճիք Ձեր կարծիքները կամ պայմանները յայտնել իմ առաջարկութեան եւ ենթադրած պայմանների մասին:

Այս իմ նամակս մնաց Ձեր կողմից անպատասխան: Համարելով, որ նա-

\* Կամ՝ որ Ձեր պատասխանը իմ ձեռքը չէ հասել [Ս. Մ.]:

<sup>58</sup> 4րդ էջի վերը մեքենագրուած է. «N-<sup>o</sup> 13. Prof. Stéfan Malkhassiants, - 1902, Tiflis.- (Lettre deuxième)»:

<sup>59</sup> Մաշտոցեան Մատենադարան, նորայրի թղթօն, Հ<sup>մ</sup> 112 (մախկին Հ<sup>մ</sup> թղթ. 235, վաւ. 25):

մակա կարող է կորած եւ Ձեր ձեռքը չհասած լինել՝ նոյն տարուայ դեկտեմբերի 23-ին (հ. տ.) ապահովուած նամակ ուղարկեցի Ձեզ, խնդրելով պատասխանել առաջին նամակիս\*։ Այս երկրորդ նամակիս հետ ուղարկել էի Ձեզ եւ մի օրինակ տպագրուած «Յայտագիր» Հայոց պատմագրքի հրատարակութեան մասին։

Այս երկրորդ նամակս էլ Ձեր կողմից մնաց անպատասխան։

Ձեմ կարող ենթադրել, թէ այս ապահովուած նամակս էլ Ձեր ձեռքը հասած չլինի (այլապէս՝ նա պէտք է յետ դարձուէր ինձ). ուստի ստիպուած եմ կասկածել, թէ Դուք գուցէ որեւէ պատճառ էք ունեցել ինձ չպատասխանելու։

Այս մի տարուայ ընթացքում ես շատ եւ շատ անգամ մտածել եմ, թէ ի՛նչ կարող է լինել Ձեր այդ լռութեան պատճառը, մի երկտողով պատասխան զլանալը՝ եւ չեմ կարողացել բացատրել։ Ես Ձեզ երբեք առիթ չեմ տուել ինձանից վիրաւորուելու, եւ ինքս, բացի խորին յարգանքից դէպի Ձեզ, որ միշտ յայտարարել եմ գրով եւ խօսքով՝ չեմ ունեցել այնպիսի մի խօսք ասած, մի գործ կատարած՝ որից իրաւունք ունենայիք նեղանալու։ Ի՞նչ է ուրեմն Ձեր լռութեան պատճառը, — այժմ էլ չգիտեմ։

Սակայն գործը կարելոր է, Պատմագիրքը, որի առաջին հատորի (Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ եւ Խորենացի) ծախսը յոգացուած է՝ արդէն սկսել եմ տպագրել։ Շարուած է Ղ. Փարպեցին։ Ամէն անգամ, երբ կա՛մ բնագիրն եմ կազմում ձեռագրի եւ տպագիրների բաղդատութեան հիման վրայ, կա՛մ սրբագրութիւն եմ անում՝ չեմ կարողանում մոռանալ, որ Դուք, հայոց մատենագրութեան այնպիսի սիրահարդ, նախնեաց քննական հրատարակութեան ջերմ քարոզողդ, մեր հեղինակների ուսումնասիրութեան վրայ մի ամբողջ կեանք մաշողդ եւ հմտութիւնների մեծ համբար ունեցողդ՝ Դուք Ձեզ մեկուսացնում էք այդ համազգային գործին մասնակցելուց եւ նպաստելուց։

Մեր ձեռնարկած հրատարակութիւնը պատուաւոր գործ կլինի, եւ մենք՝ ձեռնարկողներս ու աշխատակիցներս, ամօթով չենք մնայ գիտութեան առաջ։ Այս ես լաւ գիտեմ։ Բայց համոզուած եմ նոյնպէս, որ Ձեր աշխատակցութիւնն այնու ամենայնիւ անգնահատելի կլինէր այս հրատարակութեան համար։ Միեւնոյն ժամանակ Ձեր անունն էլ, իբրեւ բազմաթիւ եւ բազմախոսուն աղաւաղութիւնների ուղղիչի՝ կանմահանար այս հրատարակութեան էջերում։

Այս պատճառով, անտես անելով անձնական պատուի պահանջը, երկու նամակս անպատասխան մնալուց յետոյ՝ ահա գրում եմ այս երրորդ, եւ վերջին,

\* Որի բովանդակութիւնը մէջ էի բերել [Ս. Մ.]։

նամակս. գրում եմ, որպէսզի հանգիստ լինի խիղճս, որ արի՛ ինչ որ կարելի էր անել, եւ պատասխան ունենամ տալու հայ հասարակութեան ու բանասիրութեան: Գրում եմ, ամենախոնարհաբար խնդրելով Ձեզանից՝ մի երկտողով պատասխանել, թէ չէ՞ք ուզում մասնակցել Հայոց Պատմագրքի հրատարակութեան, որպէսզի ես միամիտ լինիմ, կամ, եթէ ուզում էք մասնակցել, ապա յայտնել Ձեր պայմանները, որոնց բաւարարութիւն տալը, որչափ ինձանից է կախուած՝ իմ ջերմ ցանկութիւնս կլինի:

Խնդրում եմ Ձեզանից մի պատասխան, ի՛նչպիսի եւ իցէ բովանդակութեամբ: Ընդունեցէ՛ք, Մեծապատիւ տէր, խորին յարգանացս հաւաստիքը, որով մնում եմ առ Ձեզ՝

Խ. Տ. Ստ. Մալխասեանց

Հասցէս - Tiflis (Caucase), Stépan Malkhassiantz, Séminaire Nersisseean  
կամ դարձեալ իմ անունով Rédaction «Mschak»<sup>60</sup>:

\* \* \*

Եթէ Մալխասեանցի համար նամակագրութեան աւարտով խնդիրը փակուել է<sup>61</sup>, ապա Նորայրի մէջ սեւեռուած ցաւը շարունակ վերարթնացել եւ մորմոքել է:

Այսպէս՝ 1905 թ. օգոստոսի 13ին Վենետիկից Գիւտ քհն Աղանեանցին գրած նամակում Նորայրը գրել է. «Գիտէք որ Տ. Ստեփան Մալխասեանց փափագեցաւ իմ աշակցութեան Հայ պատմագրաց նոր հրատարակութեան համար: Խնդրեցի 25,000 ռուբլի: Արժանի է,- պատասխանեց Մալխասեանց,- բայց երազ է: Եթէ «արժանի» էր՝ կարծեմ պէտք չէր որ «Երազ» համարուէր»<sup>62</sup>:

Ապա՝ 1912 թ. փետրուարի 1ին նոյն Աղանեանցին գրել է. «Ստեփանոս Մալխասեան ներկայացուցեր է Ղուկասեան Մրցանակի վարչութեան զիւր հրատարակած «Ազաթանգեղոս»ն, Տփղիս, 1909, եւ վարչութիւնդ կը փափագի լսել զիմ «գրաւոր եւ պատճառաբանեալ կարծիքն այդ երկի մասին»: Հանդէս ամսօրէի 1911 հոկտ.-նոյեմբերի եւ դեկտեմբերի թերթերէն տեղեկացած էք՝ որ

<sup>60</sup> Վերջին էջի վերը մեքենագրուած է՝ «N-<sup>o</sup> 14. Prof. Stéfan Malkhassiantz,- 1903, Tiflis,- (Lettre troisième)»:

<sup>61</sup> «Մեանով վերջանում է քրթակցութիւնը իմ եւ Նորայր Բիւզանդացու մէջ՝ «Պատմագրքի» աշխատակցութեան նկատմամբ» (տե՛ս վերը՝ «Մշակ»ի հրատարակած 4րդ նամակից անմիջապէս յետոյ):

<sup>62</sup> Բ. Ս. Ղազարեան, «Նորայր Բիւզանդացու նամակներից՝ ուղղուած Գիւտ Բահանայ Աղանեանին», Բե՛շ, 1992/1 (76), էջ 155:

եւ «Յուշարձան»ին մէջ ունիմ «Քննութիւն Մալխասեան հրատարակութեանց Ագաթանգեղոսի եւ Ղ. Փարպեցւոյ», ընդարձակ յօդուած<sup>63</sup> մի՞ որմէ լիով կ'իմանաք զիմ դատաստանն: Բայց դուք եթէ վճիռ կ'ուզէք յինէն, իմ վճիռս այս է. Տուէ՛ք Ղուկասեան Մրցանակի ամբողջական գումարը Մալխասեանի եւ իւր երկու ընկերաց<sup>64</sup>, որպէս զի հաւասարապէս բաժնեն իրենց մէջ: Ի նորատիպ «Ագաթանգեղոս»ին կայ մեծ աշխատութիւն, եւ այս մեծ աշխատութիւնս է միայն զոր Դուք պիտի վարձատրէք: Այն որ պահանջեց 25,000 ռուբլի «Պատմագիրք Հայոց» հաւաքման հրատարակութեան աշակցելու համար, քաջ իսկ ըմբռնած էր գործոյն սաստիկ ծանրութիւնը, եւ մեծապէս օգտակար ըլլալ կը յուսար իւր յիսնամեայ քննութեամբք եւ ուսումնասիրութեամբք: Ուշիմ մարդիկ թող կարդան զյօդուած «Յուշարձան»ին եւ վկայեն թէ յօդուածագրին դիտողութիւնքն իրաւացի՞ են թէ ոչ: Զլացուեցաւ 25,000 ռուբլին այնպիսի աշխատութեան համար՝ որ բովանդակ կեանք մը մաշեցուցած է, եւ նախամեծար ընտրուեցաւ, «աժանութիւն»ն: Աւանիկ «աժանութեան» պտուղներն, այնպիսի՛ Ագաթանգեղոս եւ այնպիսի՛ Ղազար Փարպեցի»<sup>65</sup>:

Իսկ 1912 թ. ապրիլի 5ի նամակով, ի պատասխան Ղուկասեան մրցանակի յանձնաժողովի պնդման՝ թէ «զիմ «Ագաթանգեղոս»ի «քննադատութեան վերջնական եզրակացութիւնը՝ մի երկտող պաշտօնագրով» ծանուցանեմ իրեն» – հրաժարուել է՝ «գրելու կարողութիւն չունիմ այժմ». եւ խոստանում է «Յուշարձան»ի յօդուածի առանձնատիպեր ստանալուն պէս ուղարկել՝ «նոյն օրին 3 օրինակ, մի Ձեզ, մի Ղուկասեան Յանձնաժողովոյն, եւ մի առ Ստեփանոս Մալխասեան՝ զոր խնդրեմ բարեհաճիք յանձնել իրեն»:

Կրկին չի մոռացել ասելու՝ «Յիսուն տարիէ աւելի աշխատած եմ Հայ հին մատենագրութիւնը եւ մատենագիրները ուսումնասիրելու, աշխատած եմ ձրի, եւ ձրի աշխատութիւնս հալած մաշած է զիս: Վերջին ձրի աշխատութիւնս եղաւ անցեալ տարի «Յուշարձան»ին համար գրած ընդարձակ յօդուածս»<sup>66</sup>:

Այս քաղուածքները ցոյց են տալիս, որ Մալխասեանցը սխալուում էր՝ մտածելով թէ աշխատակցութեան իր առաջարկին ի պատասխան Նորայրը

<sup>63</sup> Տե՛ս վերը, ծնթ. 5:

<sup>64</sup> Ռ. Ղազարեանը ծանօթագրել է. «Նկատի ունի հայագետներ Գ. Տէր-Մկրտչեանին եւ Ստ. Կանայեանցին»:

<sup>65</sup> Նոյն տեղում, էջ 156:

<sup>66</sup> Նոյն տեղում, էջ 157:

«պայման է առաջարկում, որ հաւասար է մերժողական պատասխանի»․ այսինքն՝ պայմանը կարծես համարում է մերժման պատրուակ: Իսկ Նորայրը համոզուած էր, որ Մալխասեանցն իր պայմանը շատ ուղիղ պէտք է հասկանար եւ հնարաւոր ու անհնար բոլոր միջոցները գործադրելով, ամբողջ ծրագրի նախահաշիւ 20.000ը գերազանցող՝ 25.000 ռուբլի վճարէր իրեն. «հաճեցէ՛ք հայթայթել ինձ 25,000 (քսան եւ հինգ հազար) ռուբլի, յղեցէ՛ք ինձ զգումարդ, եւ ես կաջակցեմ ձեզ բոլոր զօրութեամբս»:

Մտածում ենք, որ կար նաեւ աւելին՝ Նորայրի զուտ անձնական խանդի հանգամանքը. Մալխասեանցի «Պատմագիրք Հայոց» ծրագիրը գրեթէ այն էր, ինչ որպէս աւելի լայն ընդգրկումի երազային անելիք, «Հայ Մատենադարան» անուանելով եւ «Նախնիք» խորագրի ներքոյ, նա հրապարակել էր դեռեւս 1887 թուականին. «Ես ի շատ ամաց վառեալ էի մեծ փափագով նուիրելոյ զիմ բոլոր կեանքս գրչագրաց տպագրութեան, եւ մինչեւ իսկ առատասիրտ անձանց ոմանց 4-5 հազար ռուբլոյ նպաստիւ կը խորհէի միջամուխ լինել ի գործ: Իմ դիտաւորութիւնս էր Հինգերորդ դարէն մինչեւ ցՎեշտասաներորդն հրատարակել զամենայն հայերէն մատենագրութիւնս եւ թարգմանութիւնս Հնոց, Միջնոց եւ Նորոց՝ ժամանակագրական կարգաւ եւ վերստին տպագրելով զմիանգամ տպագրեալս: Մէն մի հատոր այս Հայ Մատենադարանին (Bibliotheca Armena) ճոխացեալ պիտի ըլլար կենսագրական տեղեկութեամբք զհեղինակէն, պատմական, աշխարհագրական |Ա.7| եւ հնախօսական ծանօթութեամբք, լուսաբանութեամբք, քննադատական տեսութեամբք եւ ընտրութեամբ ընթերցուածոց, հաւաքմամբ բառից եւ յատկաբանութեանց հեղինակին կամ թարգմանչին, բաղդատութեամբք բնագրաց (յոյն, ասորի, արաբացի): Գործ ամենածանր, զորոյ զհիմունսն ես կը բաղձայի դնել, թողով ալլոց զիմ գրեան եւ զթղթեան եւ զգրամագլուխ՝ որպէս զի յետ իմոյ վախճանին նովին ոճով շարունակեն»<sup>67</sup>:

Խօսքի շարունակութիւնն արդէն չափազանց աւաղական է. «Սակայն այսպիսի փափագ մի յարդիւնս ածելոյ համար հարկ էր, որ բաց ըլլային իմ առջեւ ամենայն թանգարանք, ուր հայերէն գրչագիրք կը պահուին: Տարիներով աշխատեցայ, որ իմ ճանապարհս մաքրուի խոչերէ եւ արգելքներէ, եւ ես հասնիմ ի ցանկալի նպատակն. աւա՛ղ, յոգնութենէ եւ վհատութենէ զատ ոչ ինչ

<sup>67</sup> Գեորգ Տէր-Վարդանեան, «Նորայր Բիւզանդացու «Քննասէր»-ը», ՊՔՀ, 2005/Բ., էջ 105:

շահեցայ: Բարեա՛ւ մնան ուրեմն գրչագիրք՝ ուր որ են, եւ ես զբաղիմ մի միայն տպագրեալ մատենագրութեամբք նախնեաց: Երբ Տէր յաջողէ, որ հաստա|Ա.Տ|տուիմ ի քաղաքի, ուր հայ տպարան կը գտնուի, պիտի հրատարակեմ զիմ մատենանն ՆԱԽՆԻՔ, յորում ամփոփած եմ զիմ բովանդակ հետազօտութիւնս, եւ կը յուսամ՝ թէ այն ամէն հրատարակեալ գործք մեր հին մատենագրաց, զորս կրցած եմ հաւաքել եւ ուսումնասիրել՝ շատ տեղ բոլորովին նոր կերպարանօք պիտի ներկայանան»<sup>68</sup>:

\* \* \*

Ժամանակը ցոյց տուեց, որ թէ՛ Մալխասեանցն իր ժամանակի համար հնարաւորից շատ մեծ խնդիր էր ստանձնել եւ թէ՛ Նորայրն էր առաւել մեծ եւ մի մարդու ուժերից շատ աւելի մեծ երազանք փայտայել: Այդ պատճառով էլ Մալխասեանցի «Պատմագիրք Հայոց» շարքով տպագրուեց ընդամէնը երեք գիրք<sup>69</sup>, Նորայրից էլ մնաց մեր մատենագիրներին երկերի բառական սրբագրութիւններ պարունակող՝ «Նախնիք» խորագրով մի անաւարտ եւ թերի պահպանուած աշխատութիւն, որը նրա վախճանից ութ տասնամեակ անց հրատարակեց Մարտիրոս Մինասեանը, մնացել է նաեւ նոյնպիսի խնդիրներ արծարծող ստուար նամականի, որը եւս անպայման պէտք է հրապարակել:

Առաւել եւս՝ թէ՛ Մալխասեանցի ու Նորայրի եւ թէ՛ վերջինիս հրատարակիչ, աւելի մերձաւոր անցեալի բազմավաստակ բանասէր Մարտիրոս Մինասեանի գիտական գրական ժառանգութեան հատորաշարային հրատարակութիւններ իրագործելը մեզ համար օրախնդիր հարց է: Այս երախտաշատ մտաւորականների երկերի բազմահատորեակների հրատարակութիւնը պարտաւոր է անել Մաշտոցեան Մատենադարանը, որովհետեւ՝ ա. երեքն էլ զբաղուել են հիմնականում Մատենադարանի պահպանած նիւթի՝ միջնադարի մեր մատենագրութեան խնդիրներով, բ. երեքի արխիւներն էլ Մատենադարանում են (Մինասեանինը՝ նաեւ որոշակի պայմանագրային պարտաւորութիւններով):

<sup>68</sup> Նոյն տեղում, էջ 105-6 («|Ա.7|» եւ «|Ա.8|») Նորայրի Քննասէրի Ա. պրակի էջահամարներն են):

<sup>69</sup> Փարսեցի՝ 1904, Ագաթանգեղոս՝ 1909, Խորենացի՝ 1913:

GEVORG TER-VARDANYAN

**STEPANOS MALKHASEANTS, THE SERIES ARMENIAN  
HISTORIOGRAPHERS, AND NORAYR BIUZANDATSI**

**Key words:** Martiros Minasyan, study of old Armenian texts, questions of publication of scholarly literature.

The author characterizes and assesses the work of Stepanos Malkhaseants, Norayr Biuzandatsi, and partly of Martiros Minasyan, demonstrating its importance in the development of Armenian philology. Furthermore, the necessity of a multivolume publication of their works is stressed. The article is supplemented by a new edition of two articles by S. Malkhaseants: “From Old Ages” and “Forgotten or Not?”, as well as by Malkhaseants’s four letters to Norayr Byuzandatsi. These are the most important documents related to the editorial principles of the series Armenian Historiographers. They are significant for scholars interested in textological questions.

ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН

**СТЕПАНОС МАЛХАСЯНЦ, СЕРИЯ “АРМЯНСКИЕ  
ИСТОРИОГРАФЫ” И НОРАЙР БЮЗАНДАЦИ**

**Ключевые слова:** Мартирос Минасян, исследование древнеармянских текстов, вопросы издания научного наследия.

В статье в общих чертах охарактеризованы и оценены заслуги Степаноса Малхасянца, Норайра Бюзандаци и, частично, Мартироса Минасяна перед филологической наукой, обоснована важность издания многотомников научных трудов этих ученых, переизданы две статьи С. Малхасянца – “Из древних веков” и “Забыт или не забыт?”, а также четыре письма С. Малхасянца к Норайру Бюзандаци. Эта совокупность важнейших документов освещает формирование принципов издания серии “Историографы Армении.” Знакомство с ними очень важно для филологов, интересующихся армянской текстологией.